

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 1

1 ՄԱՐՏ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Մասիս»ի վերհեղձման առթիւ

Կօժ քը Սիեռօզ

Ընթերցումը

Գիտական աշխատք

Հիմեն ու Ըորեն

Ինչպէ՞ս կ'աշխատին եւրոպացի գրագէտները

Բանաստեղծութիւններ

Առաջումք

Օճի ափումը (Քարգմ.)

ԱՏՐՈՒՇԱԿ

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐՅԱՆ

ԱՐԱՅ

Տ. Ա.

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ

ԱՆԱՐԷԼԱ

Խմբագրական Նօթեր:—Հանագանգ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերի արեւելան բաժանորդագիւնն է Կ. Պոլսոյ համար ԲԱՆԱՍԻՍ ղրօ. եւ գաւառներուն համար յիսուն ղրօ., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 բուլայի: Թղթատրական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ երապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու:

2 քի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասջելի պայմաններով:

2 քի-ԲԷԷ ԿԸ ԵԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) فرتى ادارى

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլս, Հալաքիտ

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Ծաղկաւոր թէյ

Թէյը, որ այսօր գրեթէ բոլոր ժողովրդաց գլխաւոր ըմպելիէն դարձած է, այնքան բաղձաթիւ տեսակներ ունի որ, արդարեւ գործածողներուն համար բաւական դժուար է լու ընտրութիւն մը ընել: Այդ տեսակներէն մմանք Նշանաւոր են իբր Եւրոպական եւ քաղցրաւոր, սմանք ու թէեւ Նայնքան Եւրոպայի համ ու հոտ լուներն, գերազանց են սակայն իբր հոգիւրիչ եւ զօրացուցիչ: Վերջապէս իւրաքանչիւր թէյ իր ուրոյն յատկութիւններն ունին որոնք զինքը կը զանազանեն ուրիշ, տեսակներէ:



Սակայն հայ թէյ մը, որ այդ յատկութեանց մմէնէն կարեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ գոյն, համահա եւ մանուշղ. կազ, դուրիչ եւ զօրացուցիչ տեղաւորական ազդեցութիւն մը, եւ այդ թէյն է ձաքանցի րէյը, որ այդ յատկութեանց շնորհիւ կը յարմարի տէն տարիքի ու կազմութեան, մմէն կլիմայի եւ եղանակի եւ մմէն ճաշակի:

Սալբուսեան եւ Իսապուլեան րէյի մեծ վաճառատուներ, իր բաղձաթիւ յանաւոր դաց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս աղաւթ մեծաքանակ ներածած է ճարտագան զուտ թէյ մասնաւոր եւ իսկական աւափերով ու կը հրաւիրէ օգտուիլ այս սորթէն բոլոր տեսնք, որ կը փոփոքի ունենալ թէյ մը:

Համով, հոտով, առողջապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկական, չինական, Սէյլան եւ Ծովայի տեսնալու տեսակ թէյեր:

1-10

Ուսադուրիւն մարգալի

ՏԵՊԹ. ԲՕՐԹ ՈՒՊԱԼԻՍ

(Dr. Portucalis)

Նախկին ուսուցիչ Կ. Պօլսոյ, Կայս. Բժշկական վարժարանին, աղաւթ Բարիդի Բժշկական համաժողովին: Մասնագէտ արանց եւ կանանց ծննդական դործարան. օերաւ հիւանդութեանց: Պատույ վկայագիր ունի Պէրլինի, Լոնտոնի, Բեյթայի եւ ուրիշ երկիրներու Ակադեմիաներէն: Հնարիչ բժշկական գործիքներու եւ հեղինակ մասնագիտութեան վերաբերեալ գործերու: Հիւանդ կ'ընդունի Պօլսոյ, Կազմ. կամուրջին դէմի տնկիւնը, իր գործառնատան մէջ, մմէն օր կէսօրէն մինչեւ իրիկուն: Իսկ Բերա, Թաքսիմ, Փրանսական հիւանդանոցին դէմ, մմէն օր առաւօտէն մինչեւ կէս օր եւ իրիկուն ժամ 6 էն 9 (Ը. Ե.)

1-10

ԳՈՐԾԱՐԱՆ

Գորգի մաքրութեան եւ նորոգութեան (Գրասենեակ՝ Մահմաւ—փաշա, Թարաքըլար, Մեծ Նար Խանի կից, Թ. 37)

Այս հանրածանօթ գործարանին մէջ կը մաքրուին աղաւթաւ եւ փաշա թէյ մետաքսէ եւ թէյ բարդէ մմէն տեսակ ընտիր գորգեր, քիմիական դեղորէից միջոցաւ, առանց օր եւ է արաւ կամ հեաք ձգելու: Ընդհակառակը, բոլորովին նոր երեսօթ մը կ'առնեն այս գործարանին մէջ մաքրուած գորգերը:

Ունի նաեւ առաւելութիւն մը նոր գորգերու վրայ, այն է թէ՛ այս գործարանին մէջ մաքրուած գորգերը զերծ կը լաւանջուին (կիւվէ) կեր ըլլալէ:

Կը նորոգուին նաեւ օրեւէ կերպով փաշա թէյ գորգեր:

Սոյն գործարանը կը ստանձնէ նաեւ պատրաստել նոր գորգեր, ինչ մեծութեամբ ու ճաշակով օր ուղարկի:

Յանձնարարութիւնք պէտք է ազուրի գրասենեակը:

Գիւրամաւալիկ պայմաններ:

1-10

CAISSE PATERNELLE

ՔԷՍ ԲԱԴԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՋ 1841 ԻՆ

ԿԸ ԳՈՐԾԷ ՅՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՅՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿԵՌԻՆ ՏԱԿ

ՍԿԻՐԵԼԵ Ի ՎԵՐ ԱՊԱՏՈՎԱԳՐԵԱԼՆԵՐՈՒ ԵՂԱԺ ՎՃԱՐՈՒՄ 300 միլիոն ֆր.

ՍԿԻՐԵԼԵ Ի ՎԵՐ ԱՐՃԱՆԱԳՐԵԱԼ ԱՊԱՏՈՎԱԳՐՈՒԹԻՆԴ 700 միլիոն ֆր.

ԸՆԹԱՑԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՅՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ 62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահեստի համեմատութիւնն է 749/100 որով ՔԷՍ ԲԱԴԵՐՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը գեր ի վեր կը հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց տուած երաշխաւորութիւնէն:

Ընկերութեան վարչական Խորհուրդը կազմուած է Յրանալի անդէնէն նշանաւոր դրամաւորներէն. ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Յրանալի երկաթուղեաց ընկերութեան եւ Քրէտի Լիօնէի վարչական Խորհուրդոյ անդամ.

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՖԼԷՌ. Դրանադուրեղիք ընկերութեան վարչական Խորհուրդոյ անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԷՆ ԿԻՂԷՄ. նախկին գանձապահ.

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Քրէտի Լիօնէի.

Թուրքիոյ Տնօրէն Գ. ԱՍՏՈՒԱՄԱՏՈՒՐ

Պոլիս, Սուլթան-Համամ. Բասաժ Քաթրճըզլու

Ընկերութեան վրայ տեղեկութիւն առնելու համար դիմել Քրէտի Լիօնէի.

ԾԱՆՈթ.— Ծանաւոր դիրք պիտի տրուի այն ֆեֆիշին որ կարեւոր արդիւնք մը իրագործած քլայ անձնապէս:

1—10

ԱԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամէն տեսակ քօհաֆիյէ ապրանց

Մեծ—Շուկայ, Բերքէրներու դրան կէց, Բ. 41—43

Նայնպէս, արանց եւ կանանց ճաշատուօր հովանոցներու վաճառատուն, Պոլիս, Սուլթան-Համամ, Միտիլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ Քօհաֆիյէի վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յառուկ հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն տակաւնութիւն, եւ դիւրամատ չելի գիններու առուելութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան:

Աղամ վարդեան մեծապէս գոհ Բաշուցած է իր բազմաթիւ յաճախորդները:

Կ'արժէ որ Շուկայ, Ելլուղ ամէն ընտանիք այցելէ ծնգամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հագալու համար:

1—10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԵԼԵԱՆ

ՌԵՐԱ, ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիսէին դ'մ

Գե. Նե. Շը. օրերը առաւօտեան կանու-

խէն մինչեւ իրիկուան Ժ. 11 1/2

Բե. Գե. Ուր. օրերը 6եմ մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամայրուարեամբ 1—10

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՈՒՆԷ ՎԵՐՋԸ՝ ԶԹՐՈՒԹԻՈՒՆ

Երբ տենդեր և երկայն հիւանդութիւններ և անհանգստութիւններ որոնք մարմնը տկարացուցած և ընդհանուր անզօրութեան մէջ ձգած են, ի հարկէ մարդո զօրացուցիչ բանի մը կարօտ է որ զենքը շուտմը կատարեալ առողջութեան հասցնէ:



SCOTT'S EMULSION

աշխարհիս մէջ առաջին կարգի զօրացուցիչ դեղ մըն է և իրեն հաւասարը չիկայ: Ասիկայ թէ անորձակ կուտայ և թէ մարտողութիւնը կը շտապէ. Մարմինը կը զարգացնէ և նոր հարուստ արիւն կուտայ, կենսաղութիւնը կը վերականգնէ և հիւանդութեան գիմագրելու համար ընդհանուր գրութեան զօրութիւն կուտայ: Ըագօթի Բաղադրութիւնը թէ կերակուր և թէ դեղ է. և տկարացած գրութեան մը կարօտ եղած միս և զօրութիւնը առատապէս կը մատակարարէ. և ասոր անհամար օգտակար գործողութիւնները ստուգիլ զարմանալի են: Անտարակոյս մեծ վտանքի մէջէ գրութիւնը երբ միս և զաւալ կը կորսնցնէ և հետեապէս շուտմը այնչափ կը տկարանայ որ հիւանդութիւններու դիւրաւ զոհ կ'ըլլայ:

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԱԹՐՈՒԹԻՈՒՆ

բոլոր կերակուրներու զօրութիւնը կը պարունակէ, այսի վատնումը կը դադրեցնէ և առողջութեան միս կը կազմէ: Ընդ միշտ վարդադոյն փաթեթի մը մէջ և վրան այս պատկերով կը գտնուի:

Հիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

25

Բոլոր գեղարմուկները և դեղալեւանները ին յաւելն:



ՅՈՎԱԿԻՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Մուղափերիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դեպտանատան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Զբաղման աբաուրման

Պալպալեան ամէն օր ակոյսի ամէն տեաակ հիւանդութիւններով առաւապողներ, կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան որ եւ է ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կերպալաւորէ իր լեցուցած ու չինած ակոյսները: Տորեկները ակոյս քաշել ապուլ համար որոշ վարձք մը չկայ. քաշել առաջին կամքէն կատեալ է: Վկայեալ առաւմարտութեան Տիկին Բօլին եւս կը գտնուի միշտ նոյն դարձանաւան մէջ: Աղբաւներուն ձեթ 1—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ ԹԻՒ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ

զատ, մասնագիտաբար եւ երկար օտարին երէ ի վեր կը դարձանէ օտարութի, աղեաց, միզային ճանրաներու հիւանդութիւնները, լղային տկարութիւնները, հին եւ նոր գաղիական ախտերը: Այս վերջին ախտերը՝ առանց օտարութի խանգարման եւ նորագոյն մեթոտերով չը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի ամէն օր կէս օրէ վեւջը: Զարեք-բթի օրերը միայն ձրի 1—10

ԱՄԱՆԻ

54^{րդ} ՅԱՐԻ, 2. ՇՐՁԱՆ

ԹԻԻ I

I ՄԱՐՏ 1905

ԽՍԲԱԳՐԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Վերսկսելով Մասիսի հրատարակութեան, զոր բացտուիկ պատճառով մը ընդհատելու հարկին մէջ քանուեցանք տարեգլխէն ի վեր, կը փութանք յայտարարել մեր յարգելի ընթերցողներուն՝ թէ խմբագրական որ և է փոփոխութիւն չի կրեր թերթերնիս ու անոր հրատարակութեան հոգը վստահուած է նոյն ձեռքերուն որոնք 1900ի սկիզբէն մինչև 1904ի վերջը, հինգ տարի շարունակ, վարեցին զայն։ Իսկ վարչական կամ մատակարարական ճիւղին համար եղած են կարգադրութիւններ, որոնք աւելի կանոնաւոր հիմերու վրայ կը դնեն զայն, ուսկից տարակոյս չունինք թէ զոհ պիտի մնան Մասիսի հետ նիւթական յարաբերութիւն ունեցողները։

Մասիս կը շարունակէ վայելել աշխատակցութիւնը ծանօթ գրադէտներու որոնց յիշատակութիւնն ըրած ենք արդէն նախորդ յրջանի վերջնութեթ թիւին մէջ (25 Դեկտեմբեր 1904. — Թ. 51) և որոնց մտքին ու գրչին գեղեցիկ արտադրութիւնները յաջորդաբար պիտի գան նոր. զարկ մը ու հրապոյր մը ընծայել այս ալեւոր թերթին որ մեր հին ու նոր գրադէտներու նախասիրութիւնը կը վայելէ հաւասարապէս և անոնցմով միշտ թարմ կը մնայ։

Առջի օրէն ուղղութիւննիս եղած է «Օգտակարը հաճելին խառնել» Մասիսի մէջ, ո՛չ բոլորովին չոր ու ցամաք նիւթերով խնդելով զայն, և ո՛չ ալ՝ ընդհակառակը՝ չի հրատարակելով բանասիրական, գիտական և ուսումնասիրական գրուածքներ՝ զրականին ու բանաստեղծականին հետ։ Այս ուղղութիւնը զոր լաւագոյնը կը դաւանինք՝ խմբագրական քսանամեայ փորձառութեամբ, գնահատուած ըլլալով նաև ընթերցող հասարակութենէն, կը պահենք անփոփոխ։

Մասիսի հրատարակութեան երկամեայ ընդհատման հետեւանքով որ և է զրկանք չի պատճառելու համար մեր թէ՛ տեղական և թէ՛ հեռաքնակ բաժանորդներուն, կը ծանուցանենք թէ ներկայ (վեցերորդ) տարեշրջանը պիտի հաշուի 1905 Մարտի սկիզբէն մինչև 1906 Փետրվարի վերջ, որու միջոցին մեր բաժանորդները անխափան պիտի ստանան 52 թերթ։ Այս կարգադրութիւնը կը պատկանի թէ՛ այն հին կամ նոր բաժանորդներուն որոնք յունուարի սկիզբէն վճարած կամ զրկած են իրենց բաժանորդագինը և թէ՛ այսուհետև բաժանորդագրուողներուն։

Հաւագոյն էր անշուշտ որ չի կորսնցնէինք այս երկու ամիսը. բայց պարագաները այնպէս բերին, և ճանչնալով մեր մնայուն բաժանորդներուն և ընթերցողներուն բարեացակամ վերաբերումը ու համակրանքը Մասիսին նկատմամբ, կը սիրենք յուսալ թէ չպիտի ուզէին որ աւելի բացատրութեան մէջ մտնէինք ու պիտի յարունակեն միեւնոյն զգացումները տածել այս գրական շարաթաթերթին խմբագրութեան նկատմամբ որուն բոլոր աշխատութիւնը կը ձգտի գոհացնելու իրենց ընթերցասիրական ճաշակը։

Մասիսի հասցէն կը մնայ, ըստ առաջնոյն, Դաւթիա, Բամօնտո փողոց, թիւ 8, Խըմբագրատուն Արեւելի, — որուն տպարանին մէջ կը շարունակուի տպագրուիլ թերթերնիս, — և ուր միայն պէտք է ուղղել յօդուած, նամակ և բաժանորդագին։

ԿՕՌԺ ՏԸ ՍԻԵՌՈՉ



Նկարագրութիւն մը չէ ընելիքս. պարզապէս տպաւորութեան մը արձանագրութիւնը միայն:

Սաւուայի Երկրին մէջ, հո՛ն ուր Ֆրանսական հողին վրայ խտալեան հեշտալի բուրումները կըսկսին զգալի ըլլալ, երկու ահապին բարձրութիւններու մէջէն, ընութիւնը իր կատաղութեան մէկ վայրկենին ահռելի ճեղք մը բացած է: Դարաւոր ապառաժները մինչև ան ատեն իրարու հետ միաբանութեամբ կապուած, յանկարծ պատուներ են վերէն վար, ու անոնց միջև բացուեր է անդունդ մը. մո՛ւթ, խորճանկ, անազնատեալ անդունդ մը. անջրպետին անդունդը. յաւիտենական բաժանումներուն անդունդը:

Այդ անդունդին անունն է Կօռմ տը Սիէնօզ:

Դետ մը կը վազէ մէջէն. Զրվէժով մը կը յարձակի կը մտնայ մէկ ծայրէն, խիզախ, ցասկոտ ու փրփրալից: Ներս մտնալուն պէս կը սասանի, կը կարկի ու պատկառոտ երկիւղածութեամբ մը կը տարածուի կը սողոսկի անդունդին մթաստուեր խորշերուն ու ծալքերուն մէջը. հեզիկ, անձայն կը սահի անոր ամբողջ երկայնութեամբը, ու միւս ծայրէն դուրս կ'ելլայ կը խուսափի, զգաստացած և ամօթապարտ:

Հեշտալի բան է դիտել այդ փախուստը, սժսեղուկ թաւալում մը ալիքներու որ իրարու ետեւէ մութին մէջէն դուրս կուգան զգոյշ վժտուքով մը, լոյս աշխարհ ելլալու, իրենց անհամբերութեանը մէջ քիչ մը տենդոտ, բայց միշտ խոհեմ ու սասանած:

Յայտնի է որ արհաւիրք մը կրած են այդ ալիքները. ու արհաւիրքը հոն է, քարայրին բերանը, լայն բացուած գաղանի մը կոկորդին պէս, դէպ իբն կը դարձնէ ակնարկը, հոն կէ դուրս կ'ելլան սասանած ալիքները:

Դիւլսդ կը ծռես, կը նայիս հեռուն, հեռո՛ւն, մութ անձանք որոնք յատակ չունին, կ'երկարին կ'երթան. ո՛ր. մինչև ո՛ւր, չես գիտեր:

Վժտուք մը միայն կը լսես հեռուն խորունկէն, խորհուրդին վժտուքը, մութին ձայնը, անձանքին շունչը:

Եւ ա՛հ՝ անդիմադրելի պէտք մը կը զգաս, ներս թափանցելու, ու տեսնելու, ու պրպտելու այն մթութիւնը:

Քարայրին բերանը, գետը՝ բաւական տեղ չինջ անապակ հայելիի մը երեւոյթն ունի, շոգեմակոյկ մը կապուած է հոն խոռոչի մը մէջ. սիրուն չքեղ մարմնացումն աղուոր մը տածումի մը, որ գոհունակութեան ճիւղ մը կը խլէ քեզմէ. մարդոց հետաքրքրութիւնը շահագործելու յատուկ ձեռնարկութիւններու մէջ, իբր ամենէն բարեպատեհը՝ կը սիրես, կ'ողջունես, այդ աղուորիկ շոգեմաւակը ու երկու ֆռանդ վճարելով տեսակ մը երախտագիտութեամբ մէջը կը մանաս կը նստիս: Յ քառորդ ժամ պիտի տես ճամբորդութիւնը:

Ու ահա՛ կը սուլէ փոքրիկ անառակը՝ մանուկի ճզզիւն մը տաճարի մէջ. ու սուլելով կը յառաջանայ մութ կամարներուն տակ, հետըզհետէ թաղուելով խորհուրդին մէջը. մռայլ ստուերներ երկու կողմէն ու տակը ջուր, խորճանկ հանդարտ ջուր, ո՛գի մըն է կարծես որ կը պտըտի Սանդարամիտին մէջ:

Սարսափը հետզհետէ կը տրիւն վրադ, անցքը կըսկսի նեղնալ. գլխուդ վրայի մութ կամարներէն կըսկսի ճեղքեր նշմարել որոնք կ'երկարին կը բարձրանան անլախելի, վեր վեր, շատ վեր, ու անոնցմէ վեր ճիգեր կ'ընես նշմարելու երկինքը. ուրիշ բան չես տեսներ բայց միայն պատուուած ապառաժներ որոնք ամէն վայրկեան կըսպառնան ինչալ գլխուդ վրայ գահավէժ: փախուստի ճամբայ մը կը փնտռես բնազդաբար. ջուրը խորունկ է, եզերք չիկայ, ու շոգեմաւակը չկրնար դառնալ, պէտք է յառաջանայ. ու կը յառաջանայ դանդաղ և զգոյշ. ձայնը կտրած է այլ ևս, ինքն ալ վարակուած շուրջանակի արհաւիրքէն:

Տեղ տեղ բաներ մը կը սահին կ'ինջան ապառաժներուն վրայէն, պզտիկ հողի կըտորներ կամ խիճեր, որ ահագին աղմուկ կը յարուցանեն այն լուռութեան մէջ, մերթ ընդմերթ ձայներ մը կը լսես վերէն վարէն,

շուրին մէջէն: Ետեւէդ առջեւէդ, բզզիւններ վզզիւններ որոնք չես հասկնար ի՞նչ են և սակայն թունդ կը հանեն սիրտդ. ու նաւակը կը յառաջանայ դանդաղ և անձայն, անթիւ անհամար դարձուածներու շրջաններու խորշերու մէջէն, մեծ զգուշութեամբ:

Բուն իսկ իր զգուշութիւններն են որ կը վախցընեն քեզ ու ակամայ կը մտածես, եթէ յանկարծ նաւակը զարնուի իր դիմացը ելած խոշորդոտներէն մէկուն ու փչուի կամ ո՛ր եւ իցէ վտանգի մը հանդիպի, ի՞նչ պէս ազատիլ: Շուրջ խորունկ է, տեղը մութ, ճանքան կնեռոտ ու եղերք չի կայ:

Կը յառաջանաս սակայն, հետզհետէ աւելի հետաքրքիր ու երբեմն ճշմարիտ անձկութեան վայրկեաններ են որ կ'անցընես, վայրկեաններ յորում աղերսարկու ակնարկներ կ'ողղկես շուրջանակի ապառաժներուն, մամապատ խոժոռ դէմքեր ամէնքն ալ, ցուրտ և անկարեկիր, ճիշդ ապառաժի մը պէս:

Կը սարսափիս, բայց նոյն ինքն այդ սարսափն իսկ է հեշտութիւնը. չգիտեմ ինչո՛ւ անյադ հաճոյքով մը կ'ըմբռնես այդ հեշտութիւնը. հեշտութիւն մը սոսկումէ և արհաւիրքէ չի նուաճ:

Երեք քառորդ ժամը կը լրանայ վերջապէս ու շոգեհաւը կանդ. կ'առնէ տեղ մը, անկէ անդին նաւարկելի չէ՝ այլ ևս: Բայց տակաւին վերջացած չէ, անդունդին մէջէն ելած չես դեռ:

Դետը յորձանք մըն է հոն, ու յորձանքին երկու կողմէն ապառաժները կը բարձրանան միշտ անձայր և անվերջ. մէկ կողմէն ապառաժին կողքին վրայ խոռոջ մը փորած են ու խոռոջին վրայ պզտիկ նաւամատոյց մը յարմարցուցած են. պէտք է դուրս ելլալ շոգեհաւակէն, բայց ո՛ւր երթալ, նաւամատոյցէն անդին նորէն ապառաժ է, նորէն մթութիւն, նորէն անդունդ. ճաճայ չի կայ:

Նաւամատոյցէն դուրս ելլալէ վերջն է որ կը նշմարես ... ճամբան. Աստուած. իմ, ի՞նչ ճամբայ. քով քովի երկու տախտակներ, գետին մակերեսէն քսան մեթրի չափ բարձր, ապառաժին կողքին երկայնութեամբը, երկաթէ կողերու վրայ հաստատուած,

ու նոյնպէս երկաթէ վանդակով արգելափակուած. կերկարի՛ կ'երթայ անզգալի դուռիվերով մը հետզհետէ բարձրանալով: Նաւամատոյցէն բարձր սանդուղով մը վեր կ'ելլուի այդ ճամբուն վրայ. տեսակ մը լաստակ, անդունդին վրայ կախուած. ու ահա՛ վերելք մըն է կըսկսի, միշտ մութին մէջ, անվտանգ՝ բայց ահաւելի:

Եւ ա՛րիկա՛ այսպէս կը տեսէ մինչեւ ջրվէժին մուտքը, սոսկումի եւ սարսափի հիանալի պէսպիսութիւններով. ու վերջը, յանկարծ լոյսն է որ կը պոռթկայ. կեանքն է որ նորէն կը ժպտի:

Հո՛ն Զրվէժին առջեւ կը տեսնուի մարմարեայ յիշատակարան մը որուն վրայի արձանագրութիւնը յուշատետրիս մէջ օրինակած եմ. Ահաւասիկ.

Madame la Baronne de Broc
agée de 25 ans, a expiré sous les
yeux de son amie le 10 Juin 1813

O vous qui visitez ces lieux.
n'avancez qu'avec précaution sur
ces abîmes; songez à ceux qui vous
aiment.


Բարբաղդաբար այդ աղդարարութիւնը ճանրորդութեան վերջը միայն կը հասնի, ինչ որ չարգիւեր քեզ յաղթական զուարթութեամբ մը ներս մտնելէ ճաշարան պանդոկէն որ կը բարձրանայ Cascadeին քով, լերան գագաթը:

Անկէ անդին, Grésy գիւղն է ուրկէ երկաթուղիով կարելի է վերադառնալ:

ԱՅՐՈՒՇԱՆ

Թիֆլիճի թատերասէրները կը պատրաստուին Տիկին Սիրանոյի բեմական գործունէութեան երեսնամեակը տօնել յառաջակայ անգլիի սկիզբը. Համակրելի դերասանուհին այն բաղդաւոր արուեստագիտուհիներէն է որոնց արժանիքին գնահատումը ծափահարութեանց եւ լրագրական գովեստներու մէջ չի կայանար, եւ երեսնամեակը որ պիտի տօնուի կովկասի մէջ, իր բարոյական կամ գեղարուեստական նշանակութեանը հետ կընծայէ նաեւ նիւթական նպաստաւորում մը:

ԸՆԹԵՐՑՈՒՄԸ



Ընթերցանութեան օգուտները յայտնի են : Ան կը ծառայէ մեր տգիտութիւնը փարատելու, մեր ծանօթութիւններն յաւելցնելու, մեր սրտի ազնուացման նպաստելու, վարձուքի առողջ սկզբունքներ մեզ տալու : Ան կը հայթայթէ մեզ մտաւոր և հոգեկան վայելքներ, և ձանձրոյթի ու տրտմութեան վայրկեաններու մէջ սփոփարար ու զօրացուցիչ ներշնչումներ կ'ուտայ մեզ : Ըսուած է թէ զրքերը հաճոյակատար բարեկամներ են մեզ, որք ամէն վայրկեան պատրաստ են ծառայութիւն մատուցանելու մեզ, մեր հարցումներուն պատասխանելու, մեր չգիտցածը մեզ սորվեցնելու : Եւ մինչդեռ զգալիստաբար մեր լաւագոյն բարեկամներն օր մը կ'որսնցնելու տխուր հարկին տակ կը գտնուինք, զրքերը միշտ հոն են, մեր տրամադրութեան տակ, անկորնչելի, անձերանալի : Մտքով ու երեւակայութեամբ ճամբորդելու ինչ սքանչելի առաջնորդներ են մեզ, ոմանք զմեզ երկնից բարձրութեանց մէջ հանելով, այլք Ուղիւնոսներու խորն զմեզ մխրճեցնելով, կամ հողագլուտի հնադարեան խաւերը պարզելով մեր աչաց առջև : Ոմանք անցելոյն այլազան շրջանները կը բանան մեր առջև և չօշափել կուտան մեզ վաղնջուց բարքերը, մարդիկն ու իրքը : և այլք—թէ և մենք պահենք միշտ մեր տան կամ վաւարանին անկիւնը—կը պտտցնեն զմեզ, առանց բնաւ յոգնութեան, աշխարհի այլ և այլ մասերուն ու ժողովրդոց մէջ, երկրէ երկիր, քաղաքէ քաղաք, մի քանի ժամերու դիւթական երեւակայեալ վազքի մը մէջ այցել կուտան մեզ լեզուով, բարքով, սովորութիւններով, քաղաքակրթութեամբ տարբեր ազգերը, տարբեր բնավայրերը, իւրեւ հմուտ ուղեցոյց բացատրելով մեզ զանոնք, և մեր հետաքրքրութիւնը գոհացնելով ամէն բանի վրայ : Մարդ անոնցմով ինքզինք հետզհետէ աւելի հմուտ կ'զգայ, կը տիրէ տակաւ միջոցին ու ժամանակին, ու կը խելամոէ այն գիտական և

իմաստասիրական օրէնքներուն որովք ֆիզիքական և բարոյական երեւոյթք կը մեկնուին : Գրքերը մեզ կը փոխադրեն նաև իտեական այն աշխարհներուն մէջ զորս ստեղծած են բանաստեղծներուն, վիպասաններուն, թատրերգակներուն հրաւառ և դեղասէր երեւակայութիւնք, և ո՛չ միայն գերազանց վայելքով մը կը պարարեն մեր հոգին, այլ և կը վեհացնեն կ'ազնուացնեն զայն, բարձրագունին անձուկը կը վառեն անոր մէջ : Այս ամէնն ընողը բարի պզտիկ գիրք մ'է բարի փոքրիկ անկիւնի մը մէջ, ինչպէս կ'ըսէր Կիկերոն. *In angulo cum libello* : Անոր համար Սէն-Տընիի Կանոնիկոսը, Բիէռ տը Ռիկա, իր մատենադարանին վրայ կը գրէր Աւետոյս, ըսել ուղեւով անշուշտ թէ մատենադարանը մտնել, անոր հատորները բանալ, վարդամատն արշալոյսին Արեւելից ոսկեծոյլ դռները բանալուն պէս էր, ինչպէս կ'ըսէին հին քերթողները, վանել աղջամուղջը, հրուէր կարգալ լուսոյն գալ ողողել մեր իմացականութեանց դաշտերը : Ասոր համար Եգիպտացիք դրած էին իրենց Կրատան ձակտին վրայ սա արձանագրութիւնը, «Գանձարան հոգւոյ դեղօրէից» : Մոնթէսքիէօ կ'ըսէր. «Կարդալ սիրելը փոխանակութիւն մ'ընել է իր կեանքին մէջ ունենալիք տաղտուկի ժամերուն՝ հեշտալից ժամերու հետ» :



Միայն թէ, անխտրական և անոնց մէթոտի ընթերցումը չի կրնար մեզ տալ բոլոր այն օգուտները զորս պիտի տար ընթերցանութիւնը՝ եթէ ըլլար բանաւոր ընտրութեամբ և եղանակաւ : Նախ և յառաջ ամէն զրքերը միանգամայն բարի և օգտակար չեն կրնար ըլլալ : Կա՞ն անոնց մէջ սնոտիներ և վնասակարներ իսկ, որք ոչ միայն կրնան ընդունայն ժամավաճառ ընել զմեզ, այլ և վնասել, մեր մտքին լոյսը փոխանակ փայլեցնելու՝ աղօտացնել մթնցնել, մեր զգացումները փոխանակ ազնուայնելու՝ թունաւորել ապականել : Ընտրութեան պատճառով և Գրքերը բարեկամներու նմանցուցան, բայց ինչպէս որ բարեկամաց ընտրու-

թիւն ընել պէտք է, վասն զի կրնան ըլլալ
կեղծ ու ապականիչ բարեկամներ՝ և ընկեր-
ներ, նոյնն է գրքերուն համար ալ: Գրքերը
ընկերութիւն մը կը կազմեն մեր շուրջը:
աներեւոյթ կերպով անոնց հեղինակներն են,
ո՛ր դարու ու երկրի ալ վերաբերին, որ ե-
կած նստած են մեր շուրջը ու կը բանան
մեզ իրենց միտքն ու սիրտը, կը պարզեն
մեզ իրենց խորհելու և զգալու կերպերը.
բայց ամէն ընկերութիւն չինիլ չի կրնար
ըլլալ հարկաւորապէս. յոռիներէն պէտք է
զգուշանալ, վասն զի կրնան ինասաբեր ներ-
գործութիւն ի գործ դնել մեր զգացումնե-
րուն և ուղղութեան վրայ: Ի՞նչ ստուգանիլ
կարելի է ունենալ յոռի գիրքը լաւէն զա-
տեւու համար: Այս հարցման Բ. Պուռտայս-
պէս կը պատասխանէ. «Եթէ գիրքդ քեզ կը
զգուցենէ աշխարհքէն, զքեզ վհատ կը թո-
ղու, գործելու համար առանց ուժի և պար-
կեշտութեան համար առանց խանդի, այդ
գիրքը իբրև յոռի գիրք մը նկատէ, փո՛յթ
տար անկէ ի բաց դառնալու: Մենք ամէն
բան մեր մէջէն կը տեսնենք, այն հեղինակը
որ մարդերը արհամարհել կուտայ՝ առողջ
հոգի մը չունի և ինքն ալ ինքզինք արհա-
մարհելի կ'զգայ, զանի մի՛ ընել քեզ բա-
րեկամ»: Շօն Լըպպօք, անգղիացի իմաս-
տասէր գիտունը, կեանքին գործածութիւնը
անուն իր գործին մէջ, խօսելով այս կէտի
մասին, կ'ըսէ. «Կան գրքեր որք բան մը
չեն արժեր. զանոնք կարդալ ժամանակի կո-
րուստ մը պիտի ըլլար: Կան նաև այնպէս
ինասակարներ որ չէ կարելի առանց պղծուե-
լու զանոնք կարդալ: Կան պարագաներ ուր
լաւ է տեղեկութիւն ունենալ կիանքի վը-
տանքներուն ու փորձութեանց, բայց այն
ամէն բան որ՝ զմեզ կ'ընտանեցնէ չարին
հետ՝ չարիք մ'է»: Լապլալիւս իր Նկարա-
գիւցնուուն մէջ գեղեցիկ կերպով որակած է
լաւ գիրքը. «Լաւ գիրք մը այն է որ միտքը
կը բարձրացնէ և որ ազնուական ու առողջ
զգացումներ կը ներշնչէ»: Գարլայլ անդիացի
մատենագիրն ալ ըսած է. «Տկար, թեթեւ
ընթերցողները, որք սնտոի գիրքերէ սնտոի
գիրքերու կը վաղեն, ոչ միայն անոնց և

ոչ մէկէն լաւ բան մը կը քաղեն, այլ ընդ-
հակառակն ամէնքովն ալ վնաս կը բերեն
իրենց անձին»:

* *

Հիմայ, որպէս զի լաւ գիրքերն ալ կա-
րենան տալ մեզ իրենցմէ քաղել կարելի ե-
ղած բոլոր օգուտը, կարդալու լաւագոյն
եղանակները պէտք է ընտրել, զի ոչ ամէն
եղանակ ընթերցման հաւասարապէս լաւ է:
Շատ կարդալը օգուտ չունենար, երբ լաւ
չի կարդացուիր: Ալեքսանդր Վինէ, Զուի-
ցերացի հեղինակը, կ'ըսէ. «Մեր դարը հի-
ւանդ է չափազանց կարդալէն եւ քէշ կար-
դալէն... Առանց ընթերցողին հակագոր-
ծութեանն ի վերայ հեղինակին գաղափա-
րաց, ընթերցումը չարիք մ'է աւելի քան
բարիք մը: Կ'ընել բան մը չէ՝ եթէ չմար-
սէ մարդ... Կարդալէք, բայց խորհեցէք,
եւ մի՛ կարդաք՝ եթէ չէք ուղեր խորհիլ
ձեր կարդացած տտեն եւ կարդալէնդ ետքը»:
Ահաւասիկ սքանչելի իրատ մը, որ զմեզ կը
թելադրէ խորհիլ մեր կարդացածին վրայ,
կրաւորապէս չանցնիլ կարդացուած բաներուն
վրայէն, առարկայ ընել գրքին իմաստները
մեր խորհրդածութեանց, ընդունիլ զանոնք
կամ մերժել, ըստ այնմ որ մեր խելքով եւ
փորձառութեամբ բանաւոր եւ ընդունելի կը
դատենք զանոնք եւ կամ անհիմն կամ գէթ
ստուգելի, քննելի: Նոր եւ ճշմարիտ իրո-
ղութիւններն ու բանաւոր տեսութիւնները
պարտինք քանդակել մեր մտքին մէջ, իրեւ
նոր պաշար եւ հարստութիւն յաւելցնել մեր
մտաւոր գանձին վրայ, իւրացնել զանոնք:
«Լաւ կարդալը, կ'ըսէ Տամիոն, ամէն բանէ
յառաջ հասկնալ է. յետոյ դատել եւ իրեն
սեփականութիւն ընել է հեղինակի մը մտա-
ծումները. անոնցմէ իր մեղրը չինել է, ըստ
օրինակի մեղուին, եւ աւանդ դնել զայնս,
պահելու համար զանոնք հոն, իր հոգ-
ւոյն ամենէն մաքուր մասին մէջ»: Մինչեւ
անգամ Հ. տը Սէշէլ կը պատուիրէ քաղ-
ուածներ ընել ամէն կարդացուած բաներէ:
Ըստ իս, հետեւեալ կերպով ճշդած եմ մե-
թոտաւորու արդիւնաւոր ընթերցանութեան
մը պայմանները. — Կարդալ իր ուսման թերի-

ները լրացնելու համար. — 2. Կարգալ իր մասնագիտական ճիւղերը զօրացնելու համար. — 3. Կարգալ՝ հեղինակի մը առթիւ եւ ընկերութեամբ խորհրդածելու համար. — 4. Կարգալ՝ չինիլ եւ բարերար սկզբունքներու փաստեր եւ ոյժեր հայթայթելու համար. — 5. Կարգալ՝ գեղարուեստական վայելքի եւ աղնիւ զօսանքի համար. — 6. Ըստ որում մեր ժամանակը չի բաւեր ամէն օգտակար գիրք կարդալու, ընտրել մանաւանդ մարդկային մտաց գլուխ-գործոցները, տոհմային եւ օտար գրականութեանց հրաշակերտները:

Եթէ մատենից ընթերցումը այսքան գեղեցիկ եւ օգտաւէտ արդիւնքներ ունի, ապա ո՞րչափ բարերար դեր մը կը կատարեն մարդկութեան մէջ մատենագիրք որք իրենց նմանեաց եւ տոհմակցաց համար այդպիսի մտաւոր հեշտահամ եւ սնուցիչ սեղաններու համար անսպառելի համադրանքները պատրաստած են, վասն զի գիրքը անվերջ կերպով իրար յաջորդող սերունդներու կրնայ մատուցանել իւր գերազանց օգուտները: Ամէն մի ազգի մատենագիրք ի մասնաւորի նոյն ազգի տնտեսներուն համար գուրգուրալի են, վասն զի ընդհանրապէս քիչեր կրնան լեզուագէտ ըլլալ եւ օգտուիլ օտարազգի մատենագրութենէ, իսկ մի ազգի մեծամասնութիւնը միայն իր բնիկ գրականութիւնն ունի իբրեւ գործի մտաւոր սնունդի ու վայելման, թող որ բնիկ մատենագիրք կրնայ ի մասնաւորի գոհացնել համայնքի մը իմացականութեան եւ զգայնութեան պէտքերը եւ ուղղակի խօսիլ անոնց: Ճօն Լըպպօք, վերոյիշեալ երկին մէջ, իր երկրին մատենագրութեան վրայ այս տեսակէտով խօսելով կ'ըսէ. «Մեր մատենագրութիւնը մեր ցեղին ժառանգութիւնն եւ անկորնչելի իրաւունքն է: Մենք յառաջ բերած ենք եւ կը շարունակենք յառաջ բերել աշխարհի ամենամեծ իմաստասէր բանաստեղծներէն եւ գիտութեան մարգերէն մի՛ քանին: Ոչ մի ցեղ կրնայ պարծիլ թէ ունի գրականութիւն մը աւելի շքեղ, աւելի ազնուական, աւելի մաքուր. ան աւելի հարուստ է քան մեր վաճառականութիւնը, աւելի հզօր քան մեր

դէնքերը: Երկրին փառքի տիրողներէն լաւագոյնն է. ո՛չ երբեք անոր մասին պիտի կրնանք ըլլալ չափազանցօրէն հպարտ ու չափազանցօրէն երախտագէտ»:

Մենք չենք որ մեր աղքատիկ գրականութեամբ ինքզինքնիս վերաւորեալ պիտի զգայինք անգլիացի հեղինակին այս հպարտ խօսքերէն. բայց այս խօսքերը մեզի ալ չեն յիշեցներ երախտագիտութեան այն հարկը զոր կը պարտինք մեր համեստ գրականութեան ձախներուն ու պարտքը սիրող եւ սատար ըլլալու միշտ անոր:

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ

Գիտութեան բարիքն ու չարիքը. — Անբել Բելիճօն. — Ժամագործութիւն. — Ամերիկացիքն ու Եւրոպացիքն:

Բարին, գեղեցիկը ու ճշմարիտը, կ'ըսեն ու կը ճառեն կարգ մը փիլիսոփաներ, զրա՛գէտներ, եւ շատ գրողներ: Թո՛ղ քան եւ տեսնեն «203 մէթը» կոչուած բարձրութենէն թէ ո՛ւր են բարին, գեղեցիկը եւ ճշմարիտը այն կոտորածին մէջ որ կը տեսնուի Բորթ—Արթուրի ծովային ու ցամաքային աւերակներուն մէջ(*):

Գիտութիւնը հո՛ն այս երեքին տեղը կը բռնէ, ինչպէս նաեւ կը ներկայացնէ չարը, տգեղը ու սուտը: Այն պատուական զրահաւորները զորս մարդու խելքը ու ձեռքը երկար եւ խորունկ հաշիւներով եւ հրաշալի ճարտարութեամբ չինեց, ջուրին տակ պառկած են: Տեսնելու է այժմեան պատերազմական նաւու մը ամէն մասերը, դատելու համար թէ ի՛նչ խելք, ի՛նչ աշխատութիւն, ի՛նչ խնամք տարուած է. վերջէն վար մեքենաներով լեցուած են ասոնք ամէնքը որ առանձինն առանձինն գիտութեան յաղթանակներ են ու կորսուած են. ինչո՞վ—դարձեալ գիտութեան ձեռօք, քանի որ այն թնդանթները որ ասոնք խորտակեցին, իրենք եւս գիտութեան հրաշա-

(*) Ծ. Խ. — Այս գիտականը գրուած էր իբր երկու ամիս առաջ:

կերտներ են: Դիտէ՛ք արդեօք թէ այժմի
թնդանօթի մը ուռմըը ինչ դժուար է շինել,
ինչ հաշիւներու եւ ձեռագործ աշխատու-
թեան կը կարօտի: Թո՛ղ թորփիւն եւ այլ
զէնքերը:

Եթէ նկատողութեան առնենք թէ այժմ-
եան պատերազմի արուեստը ոչ այլ ինչ է
բայց եթէ գիտական հանճարի արտադրու-
թեանց հաւաքածոյ մը, պիտի զգանք թէ
որքա՛ն մարդկային զգին հակամէտ է չարին
գործածել այն կաթիլ մը խելքը զոր նա-
խախնամութիւնը իրեն տուած է՝ բնութեան
հրաշալից գաղտնիքին ամենափոքր ինչ տե-
ղեկանալու համար:

Անթել հեռագիրն ալ ահա պատերազմա-
կան գործիք դարձաւ: Զէ՛ մի որ Բօրթ-Ար-
թուրի պաշարեալները շարունակ հեռագիր
կըստանային կառնէին դուրսին հետ, ինչ որ
նմանը չէր տեսնուած պատմութեան մէջ
պաշարեալ քաղաքներու: Եթէ կայ բան մը
որ ուշ մնաց, այն ալ անթել քէլեֆօնն է:

Արդարեւ անթել թելեֆօնն ալ հնարուե-
ցաւ: Սպանիացի ճարտարագէտ մը, Պ. Կառ-
չիա, դիպուածով խնդիրը լուծեց: Դիպ-
ուածը երբեմն ամէնէն մեծ նեցուկն է գիտուն-
ներուն համար: Որքա՛ն մեծ գիւտեր դիպ-
ուածով առաջ եկան: Օրին մէկը Պ. Կառ-
չիա, անթել հեռագրի փորձեր ըրած ատեն
կը տեսնէ թէ ընդունող կայարանը զրո-
նուող թելեֆօնի մը մէջ ձայները կը ներ-
գործուին Հերցեան ալիքներէն:

Դժուար է այստեղ մանրամասն նկարագ-
րել թէ ինչպէ՛ս կ'ըլլայ, սակայն խնդիրը
լուծուած է եւ մասնաւոր հաւաքիչ գործի
մը կայ որուն կապելով միջրոքօն մը եւ
թելեֆօն մը յարմարցուելով արտադրող
կայարանին նոյնին նման գործիքին, կրնանք
լսել պատուական երգ մը եւ կամ նուագա-
րանի մը եղանակները:

Իրաւ է որ արդի վիճակին մէջ՝ գործիքը
անխտար է, խօսակցութիւնը այնքան դիւ-
րաւ չլսուիր որքան երգը եւ սակայն չմոռ-
նանք որ սկիզբն է գիւտին եւ քիչ վերջը
անշուշտ պիտի կատարեալագործուի:

Զօրավար Շթօսէլ քանի մը ամիս ալ դի-

մանար Բօրթ-Արթուրի մէջ, այս գիւտը թեր-
եւս բաւական հասուննար՝ Ս. Բեդերսպուրկի
հետ բնական ձայնովը խօսելու համար:

* *

Ինչ որ չկատարեալագործուիր՝ այն ալ
ժամագործութիւնն է որ կարծես ետ կեր-
թայ իբր արուեստ, մինչ կը յառաջդիմէ իբր
առեւտուր: Բնաւ երբեք շինուած չէին այն-
քան տժան ժամացոյցներ ինչպէս այժմ եւ
սակայն մեքենագործութեան օտորին վիճակի
արտադրութիւններ են: Ո՛ւր են այն պատ-
ուական քլօքօմէքները որոնք մարդկային
ձեռքի ճարտարութեան վերջին կատարելու-
թեան հասած են: Պոլեկ, Բոխօն, Տեքթ,
Լէն. կարծես ոչ ոք թողուցին իրենցմէ վերջ
եւ Զուիցերիոյ ժամագործութեան գործարան-
ները կ'ողբան՝ տարուէ տարի յետադիմելն/ն
տեսնելով: Ընտիր ժամացոյց փնտռող չկայ,
եւ չատեր կը գոհանան այն կոշտակերտ սո-
խերէն որոնք Ամերիկայէն խուժեցին ֆիլ-
լօքսթրային պէս եւ մտան մեծէն մինչև փոք-
րին գրպանը:

Մարդ ամէն բանի մէջ կրնայ փիլիսոփա-
յանալ: Ժամանակը չափելու համար մարդ-
կութեան այս հապճեպը միթէ ժամանակաց
նշաններէն մէկը չէ՞: Մարդու կեանքը այս
դարուս մէջ չափ կարծ է թէ՛ մտաւոր զար-
գացման բաւելու, թէ՛ պէտքերուն հոգաց-
ման հասնելու եւ թէ՛ անթիւ վայելքներուն
արժանանալու համար եւ ծնունդէն մինչև
մեռնելու վայրկեանը այնքան կարծ տեւո-
ղութիւնը չափելու համար հարկ եղած գոր-
ծիքը, ժամացոյցը, կարծես թէ բնական օրէն-
քով մը կուգայ եւ կը յաջողի մտնել ամէնէն
աղքատին գրպանը, անոր զգացնելու հա-
մար ժամանակը որ գրեթէ միակ բանն է զոր
հարուստին եւ աղքատին անխտիր կերպով
բաշխած է բնութիւնը:

* *

Ինչ որ մեծ խտրութեամբ չնորհուած է
մարդկանց, այն ալ խելքն է: Երբեք չպիտի
ուղղուի խելքի անհաւասարութիւնը զոր
բնութիւնը հաստատած է: Այսպէս կ'ըսէ նաև
Սինտիր (Քառլ) ամերիկացի հեղինակ մը որ
նոր գիրք մը հրատարակեց New concep-

tions in science անունով թէ ի՞նչ նոր գաղափարներ, նոր ուսումնասիրուած նիւթեր կան գիտութեան մէջ, թէ որոնք են ատոնց ամէնէն շատ արդիւնք արտադրող գիտունները: Դրքին գլխաւոր գլուխներն են:

Աւելաւոր, մեր զգայաբաններէն զուրա: Այսինքն այն երեւոյթները որոնք մեր զգայարանաց ներքեւ չեն իյնար, — Մեր աւելաւոր կազմող նախնական նիւթերը ի՞նչ են: — Տարագիտութեամբ նիւթերը վերակազմելու գիտութիւնը եւ այս գիտութեան հիմնարկողը (Պ. Քեռքըյո): — Ինչպէ՞ս մարդու մարմինը կը պատկերացնէ հիւանդութեանց դէմ, եւ ինչպէ՞ս վերջին գլուխին նիւթն է: — Ամերիկայի ստորին դիւքը գիտական աւելաւորին մէջ:

Ատոնց ամէնէն պատուական յառաջադրանք մը, որուն մէջ կը նկարագրէ հին յունական եւ եգիպտական գիտութիւնները, թէ ինչպէ՞ս մարդկային միտքը արագ յառաջդիմութեան պատրաստուած էր: Ապա Միջին Դարու խաւար միտքիւնը ուր կրօնքի գաղափարին տակ գիտութիւնը կը խղզուի:

«Այս գաղափարը միշտ մեր վրայ է, կըսէ հեղինակը. բաղմամբութեան տեսակէտով ամէն ժամանակէ աւելի է, բայց այժմ դժուրութիւն մը կայ որ անոր կը հակակշիռէ»: Այն ժամանակները հաղուազիւտ էին գիտութեան տեղեակներ, և բաղմութեան մէջ կը կորսուէին, հիմա այնչափ շատ գիտուն կայ որ անկարելի է այրել ձիորտանս Պալիսոնները և կամ չարչարել Գալիլիոնները:

Շատ հետաքրքրալարժ բաներ կ'ըսէ գաղափարն նիւթերու վրայ, բայց զորն ասեմ: Ամերիկան ամէն բանի մէջ գերազանցած է Եւրոպան, կ'ըսեն ամէն տեղ: Հեղինակը այս գաղափարէն չէ, եւ այն բաղդատութիւնը զոր կ'ընէ Ամերիկայի և Եւրոպայի մէջ, բնաւ նպաստաւոր չէ նոր Աշխարհին, ինչ որ սովորական չէ լսել նոյն ինքն Ամերիկացիի մը բերնին մէջ: Չէ կարելի ըսել թէ Ամերիկան մեծ մարդիկներ չէ արտադրած, սակայն երկուստեք թուելով որքա՞ն ետ է Եւրոպայէն: Եւ սակայն ոչ ուրեք այնքան դիւրութիւններ, այնքան ճոխ աշակցութիւն նուիրուած է գիտունին որքան

Ամերիկայի մէջ: Ի՞նչ է ասոր պատճառը: Ահաւասիկ:

«Մենք անտարակոյս ճարտար ժողովուրդ մըն ենք, մեր ատենաբանները և մեր լրագիրները բնաւ առիթը չեն փախցնիր այս բանը մեղի յիշեցնելու: Մենք մեծամեծ գործեր արտադրեցինք և թերեւս այս պատճառաւ է որ Յառաջորդ մը կամ Բլոտ-Պեռնար մը չկայ մեր մէջ»: Եւրոպայի մէջ մեծ գիւտեր ընելու կարելիութեան ճշմարիտ պատճառն այն է թէ հոն այնպիսի հաստատութիւններ կը գտնեն ուր առաջին կարգի խելացի մարդեր կրնան իրենց հանրային ազատ տրամադրութեանց համաձայն աշխատիլ տուանց որ և է մէկու համար փալու ստիպեալ ըլլալու: Ամերիկայի մէջ չկան հաստատութիւններ որոնք հմանին Քոլլեժ որ Ֆրանսի կամ Լատարայի Էմքսթրիքին և կամ Գերմանիոյ համալսարանական դրութեան, ուր ուսուցիչք ամէն կերպով կրնան ազատ ուղղութիւն տալ իրենց նորանոր աշխատութեանց»:

Միացեալ Նահանգաց զաւկի մը բերնին մէջ այս խօսքերը մխիթարական են, ծերուկ Եւրոպայի գիտուններուն համար: Սակայն կարծեմ թէ չափազանցութենէ զուրկ չէ Գ. Սինաէրի պատճառաբանութիւնը:

ԱՐԱՅ

Ա Ո Ս Զ Ո Ւ Ե Ն Ե

Յափուկները երբ ձեռքիս մէջ կը չորնան, երբ սմբուլին գունատիլը կը տեսնեմ, Յաջորդ գարնան կըսպասեմ ես մի՛ միայն, Առանց ցաւի, առանց խոհի, դիւրորէն:

Սրահին մէջ երբ գեղոր մը բիրեղեայ, Անգիտակից չարժուածք մը անխնամ, Չեռքիս մէջէն յանկարծ գետիկը իյնայ, Շուտ մոռցըւող ցաւ մը հազիւ կ'իմանամ:

Վերջապոյսին դողդեղացող հուրերուն թարթափանքը նշմարելով հեռուէն, Չեմ ըզգածուիր. վաղը այգը կայ անհուն, Արշալոյսը ունինք, կ'ըսեմ, ինչքերեն:

Բայց չեմ գիտեր ինչո՞ւ այսքան սարսափեր
կը դողդողամ, կը տանջուիմ հոգիէս,
հզօրեղ օր մը կորանցնելու երկիւղին
Սարսուռովը գալարուելով խորապէս:

Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ

ԻՆՉՊԵՍ Կ'ԵՃԻՍԱՏԻՆ ԵՒՐՈՊԱՏԻ ԳՐԱԳԵՏՆԵՐԸ

Ա.

Դրագէտներու աշխատութեան եղանակը,
իրենց աշխատանոցին յարգարանքը, զիրենք
չըջապաստող առարկաները եւ իրենց նախա-
սիրութիւնները, միշտ շահագրգռած են
միտքերը, որովհետեւ ատոնց ամբողջու-
թիւնը՝ կը պատկերացնէ հեղինակին նկարա-
գիրն ու հակումները, մէկ խօսքով ներքին
մարդը:

Յաճախ այնքան ստույգ է արտաքին ա-
ռարկաներու՝ հեղինակին ներքինին՝ Մար-
դուէն հետ ունեցած աղերսը, որ ամենաշնչին
մանրամասնութիւն մը՝ ճշդիւ կը պատշաճի
գրողին հ-գիւնն ու գործերէն ցոլացող հա-
կումներուն ու նախասիրութիւններուն, գը-
րական ուղղութեան կամ բարքի ու նկա-
րագրի դաւանանքի տեսակէտէն, և արտա-
քին ու ներքին այս նախընտրութիւնները
կը նոյնանան ու զիրար կ'ամբողջացնեն շեշ-
տակի:

Եւրոպացի ամէնէն ծանօթ ու անուանի
գրագէտներու ներքին կեանքին ու աշխա-
տութեան եղանակին վրայ՝ Բօլ Աքէրի կող-
մէ կատարուած շահեկան ուսումնասիրու-
թիւն մըն է հետեւեալը. որ հարազատ ուր-
ուսագրութեամբ մը կը պատկերանան անոնց
ներքին կեանքին ամէնէն ուշադրաւ կող-
մերը, և զոր կը ներկայացնի Մասիսի ըն-
թերցողներուն, վստահ թէ, հաճօքի ժա-
մագրութիւն մը պիտի ըլլայ իրենց մտեր-
մութիւնը և քիչ մը դէմ դիմաց գտնուիլը
մեծ միտքերու հետ, անոնց աշխատանոցնե-
րուն իսկ մէջ:

Անգամ մը պատահեցաւ որ այցելութիւն
տանք Ժան Ռիշթէնի, Նոր հաստատուած էր
Նօթրը-Տամ-տէ-Շան փողոցը: Զինքը գը-
տանք պզտիկ աշխատանոցի մը մէջ, ուր
կ'ելուէր խիստ նեղ փայտէ սանդուղէ մը:
Դեղին սիկառէթ մը շրթունքին, գիրքերու,
որմանկարներու մէջտեղը, նստած՝ ծանրկէկ
սեղանի մը առջև, կոթական հսկայ թիկ-
նաթուր մը մէջ, կաղնիէ հսկայական օմի-
նէի մը դէմը, հագած քիչ սովորական զգեստ
մը: Լայն վզնոցով ճերմակ ֆլանելէ չապի-
կին վրայ, կանանչ բաճկոն մը կը կոճկուէր
կիսովին: Կաշիէ ժապաւէններ՝ ծունկն ի վար
կը սեղմէին նոյն գոյնով տափառ մը: Կա-
պիչաւոր ասուեղէն մուճակներու մէջ եր-
կարող գունազարդ ճերմակ գուլպաներ՝ կը
գրկէին իր դնդողոցները: Գլուխը դրած էր
կարմիր թաւիչէ գդակ մը:

Մեզի ծանօթ է տանգելէ թեւնոցները
Պիւֆօնի, և աւելի մօտաւոր բան մը, սև
թաւիչէ գլխանոցը և կարմիր մետաքս թաշ-
կինակը՝ Լիքթորիէն Սարտուի, և վաճականի
զգեստը Պրիէօի: Դիտենք թէ Բօլ Վէռլէն
կը գրէր սրճարանին մէջ, թուղթի կտոր-
ուանքներու վրայ, թէ Ժան Մօրէտս կը ներ-
շնչուէր առտուան ժամը երկուքին կամ ե-
րեքին, փողոցը, տուն դարձած ատեն:

Խնչպէս կ'աշխատին ֆրանսացի ժամա-
նակակից հեղինակներ: Մտնե՛ք իրենց քով:

Յաճախ տունները կը պատկերեն հոգին
անոնց որոնց բնակարանը եղած են: Անոնք կը
ցոլացնեն անոնց ճաշակներն ու մտածում-
ները. անոնք ամենահարազատ պատկերը
կ'արտացոլացնեն իրենց բնակիչներուն:

ՖՐԱՆՍԱՌԻՆ ԲՕՐԷ:

Ֆրանսուա Բօրէ ուրիշ տեղ մը չէր կրնար
բնակիլ, բայց եթէ այն պորմը՝ զոր ընտրած
է բազմաթիւ տարիներէ ի վեր, կրնէ՛լի մօտ:

Ֆրանսուա Բօրէ սիկառէթ սիկառէթի
ետեւէ կը ծխէ:

Իր ընտրած այդ Ուտինօ փողոցը, հինօր-
եայ թաղի մը շուրջը կը գտնուի, և խաղաղ
է՝ աշխարհէ զատուածի պէս, չըջապատուած
գեղջուկ պանդոկներով, գթութեան ապաս-
տաններով, և պզտիկ, խոնարհ կրպակնե-

րով : Տունին պատուհանները կը բացուին ընդարձակ պարտէզի մը վրայ, երեսփոխան Տընի Բօլէնի պարտէզը, և երբ գարունը կուգայ, գեղի կատարեալ դիւթանք մը կը պարզուի, միայն քիչ մը կարգուսարքի մը տած՝ մարդկային արուեստին միջոցով : Ֆըրանսուա Բօրէ գտած է ինչ որ կը պաշտէ, —լուծութիւնը և բնութեան գեղեցկութիւնը :

Այս առանձնարանին մէջ է որ կ'աշխատի ան : Սենեակին պատերը անյայտ եղած են գիրքերուն տակ : Բազմոց մը՝ իր բարձիկներուն փորձութիւնը կը ներկայէ, ու անոր կակղութեանը մէջէն, Բօլ Տէրուլէտի կիսանդրի մը կը ցցուի, բարձր պատուանդանի մը վրայ :

Վայելչօրէն կարգաւորուած ու լայն պատուհանի մը առջև գետեղուած սեղանին վրայ, իր գործածած սաղի փետուրէ գրիչներուն ծայրերը տակաւին թաց են սև մելանով : Բով քովի կան ճենապակիէ կիսանդրին Նարոլէոն Ա. ի և Միքէլ Անճէլօի Բրիտտոսի արծաթէ կիսանդրին : Պոնաբարթի մէկ պատկերը, քայուած ժողովի մը միջոցին և գնուած Մարքի տը Թիէվիչի հաւաքածոյէն, կը կախուին դուռին քովն ի վեր, ո՛չ այնչափ հեռու Ռաֆայէլ Գօլէնի մատիտով գծուած երկու նկարներէն, որոնք կը ներկայացնեն բանաստեղծին հայրը ու մայրը :

— Խնչպէս կ'աշխատիմ, կ'ըսէ, մատենարուն մէջ սիկառէթ մը բռնած, կրթնած ջերմոցին, ուր կը վառին յիստի կոճղեր, խիստ անկանոն աշխատող մըն եմ ես : շատ ուշ կ'ելլեմ, և իրաւցնէ, երբեք աշխատութեան ժամ ունեցած չեմ : Ծոյլ մէկը՝ որ շատ աշխատած է, անա՛ թէ ինչպէս պիտի որակէի ինքզինքս : Դիպուածաբար կ'աշխատիմ ես : Severo Torelli՛ն գրած եմ քսան օրուան մէջ, և Jacobitesը ամսուան մը մէջ : Օրինակի համար, վէպերս գրելու համար, անսահման ժամանակ վատնած եմ, ընդհատած եմ զանոնք, դարձեալ ձեռք առած, յետոյ նորէն լքած :

Ոտանաւորին գալով, պտտած տեղս կը գրեմ : Նախ թուղթին վրայ «հրէշ» մը կը կերտեմ, ա՛ն և յատակագիծ մը, յետոյ կը

պտտիմ, կ'արտասանեմ ոտանաւորս, մտիկ կ'ընեմ, և անոր առթած տղաւորութեանը կը նայիմ : Ու կը ծխեմ, կը ծխեմ, —կամ աւելի ա՛գաղար սիկառէթ կը վառեմ, զորս կրակին կուտամ, երկու երեք անգամ քաշելէ ետքը մուխը : Ու կ'աւրեմ, կ'աւրեմ...

Բնականաբար, կը նետէ սիկառէթը, և ուրիշ մը կը վառէ : Զեռքերը սև երկար որտէնիօթին ետեւը, կը տաքնան : Սեղանին վրայ, ճերմակ մեծ թերթ մը՝ ծածկուած է պզտիկ, սեղմ ու խիստ նուրբ գիրքերով : ու լուսանցքին մէջ ուղիղ գիծով մը բնագիրին միացող բոլորչիներ՝ կը պարունակեն սրբաբլուրիւնները : Իր ձեռագիրը միտքիս մէջ կ'արթնցնէ յիշատակը Բօլ Պուսթէլի մէկ ձեռագիրին, պզտիկ գիր մը, նուրբ, նուրբ, յաճախ անաւարտ, թերթերուն շուրջը ունեւնալով տարտամ գծագրութիւններ, տուններ, ծառեր, գրչի ձաքոտութենքներ՝ չինուած ա՛յն վայրկեաններուն, ուր բառը կը խուսափի միտքէն :

Խոնարհներին մեծանուն հեղինակը աշխատութեան իրարմէ խիստ տարբեր մէթոտ մը ունի՝ ոտանաւոր կամ արձակ գրելու մէջ : Խինչ ներշնչման հուրին տակ խիստ արագ կը գրէ իր բանաստեղծութիւնները, միւս կողմէ շատ ժամանակ կը վատնէ՝ վէպի մը կամ նորավէպի մը վերջնական ձևը տալու համար :

ՍԻՆԼԼԻՆՔՆԵՐԻՆ

Սիւլլի-Բրիւտօի ծխամորճը հռչակաւոր է, վայրի կեռասներէ ծխամորճ մը՝ որ լեցուելու համար միայն կը բաժնուի չրթունքներէն : Երբ Բարիդ Սէնթ-Օնօրէ արուարձանը կը բնակէր, իր սենեակին մէջ՝ ուր Հէննէրի մէկ պատկերը կը գտնուէր՝ ուրիշ բան չի կար, բայց եթէ հազուադէպ գեղորներ և հիւօրեայ կահ-կարասիներ, էլիզէի դէմը բացուող իր պատուհանին կից դրուած գրասեղանին վրայ Փիլիսոփայութիւնը խորհրդանշող արձանիկ մը կը ցցուէր, Բոսքալը և Տէքարդը ներկայացնող երկու կիսարձաններու մէջտեղ :

Հիմա որ Շաթընէ կը բնակի, աւտուան ժամը չորսին կամ հինգին կ'արթննայ ու

կ'աշխատի անկողինին մէջ, կը գրէ ծանր գրիչով մը, նուրբ ու յստակ գիրերով, առանց դադարի: Ճիշդ է որ գրած ատեն կը սրբագրէ, երբեմն արեւելով, բայց աւելի նախնական բնագիրին կցելով թուղթի մանսորտիկ կտորուանքներ, որոնք իր ձեռագիրը ճատրակի տախտակ մը կը դարձնեն:

ԱՆԱԳՈՒ ՅՐԱՆՍԻ

Նոյնչափ հոշակաւոր է Անագու Յրանսի ծխամորճը, այս անգամ ծովափրփուրէ ծխամորճ մը. խոշորկէկ ու կոր: Ան կ'աշխատի ծխելով: Մետաքսէ ծիրանեգոյն գդակ մը գլուխը, ու հագած վէսդ մը ու սիպարիկ վանականի բրդէ կակուղ լայն տափառ մը, ահա ա'ս է իր սիրական զգեստը:

Այն տեղը ուր կը գտնուի, ուր կը կարգայ, ուր կը գրէ, Պուաէն երկու վայրկեան անդին նեղկիկ ու երկար սենեակ մըն է: Վենետիկեան հսկայ շմինէ մը զայն երկուքի կը բաժնէ, և հարկւրաւոր հատորներ, հրաշալի ու հետաքրքրաշարժ կազմելով պըճնուած, կը ծածկեն պատերը: Իր առջեւ կը ժպտի Վան Էյքի դպրոցին պատկանող Աստուածածին մը: Պատուհաններուն մէջ, որոնք կը նմանին մայր-եկեղեցիներու պատուհաններու, անուշ լոյս մը կուգայ ներս:

Փափուկ ու ազդեցիկ stylister՝ երկար ատեն կ'երազէ իր աշխատութեան զմայլելի սենեակին մէջ, որ լեցուած է հնօրեայ առարկաներով ու արուեստի գործերով:

ՏՆՆԻԷԼ ԼԵՋՆԵԼՈՒ

Օմալ փողոցին վրայ մեծ սալօն մը, ու պատուհանին առջեւ քով քովի երկու գրասեղաններ: Հոտ է որ կ'աշխատի Տիկին Տանիէլ Լըղիւէօն, իր առանին հետ, Պ. Հէնրի Լարօզ: Ընդարձակ, երկար ու լուսաւէտ սենեակները կը սիրէ ան: Իր առջեւ, միշտ կը գտնուի ծաղիկի փունջ մը, որուն բուրումը, որչափ ալ խիստ բլրայ, զինքը անհանգիստ չընեն, ընդհակառակը գրգռիչ միջոց մը կ'ըլլայ իրեն հաւար ադ: Եւ մանաւանդ եթէ սեղանին վրայ ու է առարկայ տեղ չէ փոխած, եթէ գրիչները, մատիտները, կաղամարները կարգադրուելու պատրուակով կարգէ չեն ելած, իր տագոյն

կապոյտ թուղթը՝ Տիկին Լըղիւէօնի կը սպասէ միայն:

Ահաւասիկ, սեղանին առջեւ կ'անցնի ան, մահողենիէ փալփուռն թիթեղիկներով Լուի Ժ. Դ. ոճով սեղան մը, ու կը սկսի՝ առօրեայ այն աշխատութիւնը, զոր պիտի շարունակէ կէս օրէն ետքը: Եւ որովհետեւ մամուլին յանձնելիք իր ձեռագիրը երկու օրինակ կ'ընէ, կը գրէ ընդօրինակիչ մեղանով, և իւրաքանչիւր թերթ, որ կը համապատասխանէ գիրքի էջի մը, յաջորդ թերթէն բաժնուած է ծծուն թուղթով մը:

Երկար ատեն է որ կը մտածէ իր վէպին վրայ, զոր գրեթէ ամբողջովին միտքին մէջ ծրագրած է: Նոյնպէս քանի մը տողով՝ գիտէ իր տեսարանը, նոյն իսկ Մաքսի քը Վալֆօրնը: Գրիչը կը վազվզէ թուղթին վրայ... կ'արեւ, մէկ, երկու, երեք անգամ: Օհ, աւրուածները խիստ շատ են... կը պատռէ էջը, կը նետէ վայն, ու կը վերսկսի:

Կը սոսկայ այդ քերթուքներէն, կը զըռուեցնէ ադ զինքը:

Իր աշխատած ժամանակը վիշտ մը կը հալածէ զինքը. կը պաշտէ կատունները. ու իր երջանկութիւնն է՝ մէկ քանի կատու ունենալ քովը՝ հանդարտաբարձր ու ծանրաշուք:

Տիկին Տանիէլ Լըղիւէօն, բանաստեղծ և վիպասան, չնորհալի վայելագիտութիւն մը յոյս կուտայ իր աշխատութեան սեղանին յարգարման մէջ, զոր միշտ կը պճնէ ծաղիկի փունջ մը:

ԵՆՈՒՐ ԱՐՄԷՆ

ՕՏԻՆ ԿՅՈՒՆԵՆԵՐԸ

Դիւղերն ունին ճերմակ տուններ, ճեփճերմակ, խորութեան մէջ հորիզոնին ասամզուն:

Զորս կը տեսնես հեռուէն,

Թաւուտքներուն մէջ տեղուանքէն բովանդակ, Որ կազմած են վարագոյրներ մօրչագոյն: Իրենց դալար ոստերէն:

(*) Հարաւային Ֆրանսայի մէջ գետ մը՝ որ Միջերկրական կը թափի:

Յըստակ լուրթը երկինքին ալ հարաւի,
Մըթնուորտին մէջ թոյլ ու գաղջ՝ կը հեղու
իրեն լոյսը դիւթական,

Եւ, բընութեան մէջ նորազարթ, կը բացուի
Առջի աշգամ՝ սրտին ծաղիկն արեւու
Ճաճանչներուն յանդիման:

Թարգմ. ԱՆԱՐԵԼԼԱՅ

ՕՒԻԻՍԹՈՒ ՊԱՆԻՒՅ

ՀԻՆԵՆ ՈՒ ՆՈՐԵՆ

Երկու ամսուան դադարէ մը ետք, երբ
գրիչս ձեռք կ'առնեմ վերստին Մասիսին
համար, հեռացող ու վերադարձող բարե-
կամի մը տպաւորութիւնը կը թողու անի-
կայ, որուն հետ շուարած կը մնանք դէմ
դէմի, չգտնալով ինչպէ՞ս և ուրտեղէ՞ն չա-
րունակել ընդհատուած խօսակցութիւնը: Եւ
լրագիրն ալ միթէ բարեկամէ աւելի բան մը
չէ՞ իր խմբագրին ու աշխատակիցներուն հա-
մար, մտաւորական կեանքի ու սրտի գդաց-
մանց հաղորդակից մը, թէ և հանրային տե-
սակէտով՝ բայց ուր անհատականն ալ իր
բաժինը կ'ունենայ անխուսափելիօրէն:

Կաղանդին էր որ բաժնուեցանք Մասիսէն
ու Բարկենդանքին կը գտնենք զիրար, եր-
կու գուարթ չարաթներ, ուրախութեան ու
հրճուանքի յատուկ, ուր ամէն մարդ իր
միաքէն ու ընտանեկան երգիքէն կը վանէ
որ և է տխուր գաղափար և ընկճող մտա-
հոգութիւն, փոյթ չէ թէ քանի մը օրէն ա-
նոնցմով ծանրաբեռնուելու համար դարձեալ,
ըլլան նիւթական կամ հոգեկան: Օրուան
ժամանցը՝ նուագին, պարին ու դիմակինն
է, սակայն, այս պահուս. պարահանդէսները
պարահանդէսներուն կը յաջորդեն, դիմա-
կաւորները կ'եռուզեաւն Բերայի մայթե-
րուն վրայ և չըլուն երդհոններն իրենց զը-
ւարթ եղանակները կը թրթռացնեն է՛ն հե-
ռաւոր ու խաղաղիկ թաղերուն մէջ անգամ:
Այդ նուագածութեանց ու քրքջալիլ աղ-
մուկներուն մէջտեղ՝ երբ վերջին երկու ամ-
սուան անցքերու քաղուածքն ընել կը փոր-

ձեմ, անմբռնելի հակադրութեամբ մը միտքս
կը սաւառնի դէպի այդ ժամանակամիջոցին
մէջ անհետացած դէմքերը, երկու ծանօթ
անձ: ... որութեանց մահեր, — Միքայէլ էֆ.
Մամիկոնեանին ու Գարաքէհեո կարապետ
պէյին:

Մամիկոնեան էֆ.ն, չատ ծանօթ ու սիր-
ուած դէմք մը արդէն իր կենդանութեանը,
իր լիակատար կենսագրութիւններն ունեցաւ
լրագրութեան մէջ՝ իրեն արժանի հանդիսա-
կան ու ժողովրդական յուզարկաւորութենէն
ետքը: Այնպէս որ, այս յետամնաց Գրոնի-
կին մէջ դժուար պիտի ըլլար նոր բան մը
գտնել՝ գրելու իր վրայ և յարգանք մը ա-
ւելցնելու իր յիշատակին: Բայց ցաւի ու հա-
մակրանքի արտայայտութեան մը համար՝
երբեք ուշ չէ իրեն նման պատուական անձի
ժը նկատմամբ, բառին է՛ն լայն ու հարա-
զատ առումովը: Լրագրական տեսակէտէն
դատելով՝ ինքը բարեկամ և հետաքրքրուող
էր մամուլին ընդհանրապէս, ու քանի մը
ազդ. թերթերու հետ՝ Մասիսին ալ մասնա-
ւորապէս: Իր համակրանքը, այս կէս դարու
լրագրին նկատմամբ, կը սկսէր անոր հին օ-
րերէն ու մշակուած էր անոր բարեյիշատակ
արտօնատիրոջ՝ Իւթիւճեան կարապետ էֆ.ին
հետ ունեցած սերտ ծանօթութեամբը: Եղած
էին երկարատեւ չըլաններ ուր երկուքն ալ
անդամակից ու աշխատակից եղած էին Պատ-
րիարքարանի միեւնոյն ժողովներուն, մէկ-
տեղ խորհած, խորհրդակցած ու վիճաբա-
նած, բայց միշտ բարեկամ մնացած: Անգամ
մը միայն, քիչ մնաց որ այդ վաղեմի բարե-
կամութիւնը խզուէր չարաթաթերթ Մա-
սիսին պատճառաւ:

1902ին էր, կարծեմ. Մէրսէտէս՝ այս
էջերուն մէջ իր հրատարակած մէկ յոդ-
ուածովը կ'ծու դիտողութիւններ կ'ընէր է-
սեան վարժարանի լարձրագոյն դասըն-
թացքի սանուհիներուն նկատմամբ. չէինք
յիշած թէ Մամիկոնեան էֆ., ինչպէս Մա-
սիսի արտօնատիրոջ՝ նոյնպէս խմբագրու-
թեան յարգելին, ո՛չ միայն Բերայի Թաղ.
Խորհուրդին՝ այլ վարժարանաց Հոգաբար-

ձուլութեան ալ ատենապետն էր, ու իր դիւ-
րաբորբոք բնաւորութեամբը,—որ իր անկեղ-
ծութեան յատկանիշն էր,—նստեան սանուհի-
ներէն աւելի՝ ինք պիտի զայրանար։ Ու այն-
պէս ալ պատահեցաւ։ Մասիսի այդ թիւը
հրապարակ կ'ելլէր շաբաթ իրիկուն և կի-
րակի առաւօտ Մամիկոնեան էֆ.ին կը հան-
դիպէր իւթիւճեան էֆ.ին որ իր վաղեմի
բարեկամը այլափոխուած, սրտմտած կը գըտ-
նէր իր դէմ։

— Բայց ի՞նչ ունիք, Միքայէլ էֆէնտի,
ինչո՞ւ բարկացած դէմք մը առեր էք։

— Պատճառը չէ՞ք գիտեր։ Մէքսէտէսի
երէկուան յոգեւածը...

Մերունի լրագրողպետը կը կռահէ ամէն
բան և կը ջանայ մեղմացնել Մամիկոնեան
էֆ.ին զայրոյթը, խօսակցութեան ճարտար
դարձուածքներով ու մտերմական շեշտե-
րով։ Եւ, չի մոռնար բնականաբար աւելցնել
թէ ինք գիտակից չէր եղածին։ Նոյն իրի-
կունը, իւթիւճեան էֆ.ին տունը կը հրա-
ւիրուէի, ա՛նակնկալի մը առջև գտնելով ինք-
զինքս ու ջանալով մեղմացուցիչ մեկնու-
թիւններ տալ։

Բայց, այս լրագրական միջադէպը այս-
քանով չպիտի վերջանար։ Եւ հո՛ս է որ ի
յայտ կուգայ Մամիկոնեան էֆ.ին անաչառ
բնաւորութիւնը։ Յաջորդ շաբթուն, Գաղ-
ժողովին կ'երթայ և Պատրիարքարանի մի-
ջոցաւ գոհացում կը պահանջէ, որուն իրա-
ւունք ունէր։ Այդ գոհացումը լիովին կը
տրուի իրեն, Վարչական որոշմամբ և Ս.
Պատրիարք Հօր ստորագրութեամբ նամակ
մը ուղղուելով Մասիսին արտօնատիրոջը ու
խմբագրութեան, ցաւ յայտնուելով եղած
հրատարակութեանը համար և հայրաբոր յոր-
դոր կարգացուելով որ այդ կարգի անխա-
կութիւնք ուրիշ անգամ մուտ չի գտնեն
թերթին մէջ։

Այս պաշտօնագիրը ոչ նուազ անակնկալ
մը եղաւ իւթիւճեան էֆ.ին համար որ, սա-
կայն, բոլորովին ներհակ բնաւորութիւն մը
ունենալով Մամիկոնեան էֆ.իէն, զիւրաւ
չայլայրող ու իր պաղարիւնը չի կորսնցնող, և
հինուցվարժ Պատրիարքարանի հետ այս տեսակ

խնդիրներ ունենալու, «միջադէպ»ը փակեց՝
չա՛տ քաղաքավար՝ բայց չա՛տ ալ սրամիտ
պատասխան մը ուղղելով Վարչութեան։ Այս
նամակագրական ձեւակերպութիւնները գո-
հացում տուին երկու կողմին և Մամիկոնեան
ու իւթիւճեան էֆ.ները վերադարձեցին ի-
րենց նախկին բարեկամութիւնը ու առջի
մտերիմները եղան։ Անկէ ի վեր, Մամիկոն-
եան էֆ.ն շարունակեց կանոնաւոր ընթեր-
ցող մը և բարեկամ մնալ Մասիսին, մինչ-
դեռ անձուկ մաքի տէր մէկը իր տունը
չպիտի հանդպցունէր թերթը, ինչպէս ասոր
օրինակներն ալ տեսանք։ Դեռ մինչև անց-
եալ տարի, ես ինքս առիթը կուսնենայի իր
կարծիքները լսել Մասիսի այս կամ այն յոգ-
եւածներուն նկատմամբ՝ քաջալերիչ խօսքե-
րով, որոնց անկեղծութենէն կը յայտնուէր
թէ կատարելապէս մոռցած էր Մէքսէտէսին
յոգեւածը։

Այս մանրադէպը ինքնին շահեկանութիւն
մը չպիտի ունենար ընթերցողներուն համար,
եթէ սա հետեւութեան չի յանգէր՝ թէ Մա-
միկոնեան էֆ.ն որքա՛ն հոգածու և գուր-
գուրացող էր իր վարած կրթական հաստա-
տութեանը վրայ, և թէ միանգամայն՝ իր
խիստ բնաւորութեանը և իր ունեցած կա-
րեւոր դիրքին հակառակ՝ որքա՛ն հաշտարար
էր լրագրութեան հանդէպ։ Օրինապահ և
ուղղամիտ իր ամէն գործառնութեանց մէջ,
պարկեշտ ու անձնուէր ինչպէս իր հանրային՝
նոյնպէս իր անհատական կեանքին մէջ, ցաւի
ընդհանուր արտայայտութիւններ առաջ բե-
րաւ իր մահովը և զգալի պակաս մը թողուց
մեր ծանօթ անձնաւորութեանց շարքին մէջ։

Այլապէս ինքնատիպ դէմք մըն էր Կա-
րապետ պէյ Բարաքէնեաւ,—ինչպէս կը պատ-
մէին զինքը մօտէն ճանչցողները որ փոքր
թիւ մը կը կազմեն,—և որ՝ հակառակ չա՛տ
ծանօթ անուն մը կրելուն՝ անձանօթ կը
մնար մեզի, այսօրուան լրագրողներուս։
Հասած էինք իր հարստութեան համբաւը ու
երբեմնի պերճ կեանքը՝ Բարիզ, Նիդրպոս
ու Պոլիս, ազնուատոհմ անձի ու վայ-
լեցնել գիտցող հարուստի,—նոյն իսկ իր

չապլութիւններուն ու իր քմահաճոյքներուն մէջ։ Եւ իր մահէն վերջն ալ, օրաթերթե-րուն՝ և մասնաւորապէս Սուրհամդաւի մէջ երեւցած հակիրճ կենսագրական մը յիշեցուց մեզի թէ հանգուցեալը իր եղբօր՝ Գէորգ պէյի հետ կառուցանողը եղած էր Պէօյիւք-տէրէի եկեղեցիին, թէ ատենօք Հիւանդա-նոցին ըրած մէկ նուիրատուութենէն զատ, իր նպաստները չէր զլացած այս կամ այն կարօտութեանց կամ բարեսիրական դիմում-ներու, և այլն։ Լիակատար կենսագրութիւնը, զոր պատրաստած է Սանճեան Սահակ պատ-ուելին, — որ երկար տարիներէ ի վեր առիթ ունեցած էր մօտենալու Կարապետ պէյին՝ Պէօյիւքտէրէի մենաստանին մէջ, — անշուշտ չահեկան մանրամասնութիւններ պիտի երե-ւան բերէ այդ մեծանարուս անձին կեանքէն, և փափագելի էր որ հրատարակուէր։

Մեր գիտցածը, Կարապետ պէյի վրայ, վերջին քսան տարիներու միջոցին, քաղքի ժխորէն հեռու՝ Պէօյիւքտէրէի ծովախորշին վրայ, բլուրներու ստորոտը, գեղատեսիլ պարտէզէ մը շրջապատուած, իր առանձնակե-տաց կեանքն է, արեւելեան նուազածութեան և բուսաբանութեան սիրահար, որուն արդ-իւնքն էր իր պատրաստած բուսաբանական ճոխ պարտէզը։

Իր անցեալ պերճ կեանքին վրայ պատ-մուածները լսողներուն համար՝ տեսակ մը հմայք ունէր ու հետաքրքրութիւն կ'ազդէր իր անձը զոր անգամ մը միայն տեսնելու առիթը ունեցած եմ, Բերայի մէջ, Նոր Թոտ-րոնին փայլուն մէկ շրջանի միջոցին էր, ձմեռ գիշեր մը. բարեկամի մը հետ նստած էինք օթեակ մը, ներկայացուած օրէնէթին ուշա-գիր, երբ երկրորդ արարուածին սկիզբը քովի պարապ օթեակնուս մէջ երեւցաւ, հանդարտ շարժուածեով ծերունի մը, բարձ-րահասակ, քիչ մը կորաքամակ, նիհար դէմ-քով, ճերմակ պեխերով, սպասաւորի մը հե-տեւողութեամբ, ու աւելի ինկաւ՝ քան նըս-տաւ աթոռին վրայ, մուշտակապատ լայնեզր բալթոյի մը մէջ փաթթուած. յոգնած անձի մը երեւոյթը ունէր, որ սակայն ուշադրու-թիւն կը գրաւէր։ Սպասաւորը, կաշկապտ,

սե տուփի մը մէջէն փղոսկրեայ նրբարուստ կրկնադիտակ մը հանելով կարկառեց տիրոջը որ անգամ մը աչքերուն տանելով զայն՝ բեմը դիտեց, յետոյ պտտուց օթեակներուն ուղղութեամբ, և վար դրաւ։ Աւելի կը մրափէր քան կը դիտէր, աւելի նուազա-ծութեան ուշադիր քան տեսարանին, ամ-բողջ արարուածին տեւողութեանը միջոցին, հազիւ մէկ — երկու անգամ ձեռք առաւ դի-տակը, երբ նոր դերասան մը կամ դերասա-նուհի մը զգալի կ'ընէին իրենց մուտքը՝ ի-րենց երգուածքով։ Նրորդ արարուածին կիսուն մեկնեցաւ։

Հետաքրքրուեցայ գիտնալու թէ ո՞վ էր այս blasé ծերունին, որ՝ երբ ամէնքը սրա-հին մէջ «աչք և ակնաջ կտրած» կը հետեւ-էին ֆրանսական օրէնէթին, կը ծափահա-րէին, ծաղկեփունջեր կը նուիրէին, կրկնու-թիւն կը պահանջէին, ինքը հազիւ ակնարկը բեմին կողմը կը դարձնէր, վայելած ըլլա-լով այդ ներկայացմանց հրաշալիները եւրո-պական բեմերուն վրայ և յափրացած ըլլա-լով թատրոնէ ու ներկայացումէ։

— Կարապետ պէյն էր, պատասխանեցին։
Իր անցեալ համբաւին արժանաւոր ծե-րութիւն մը կը վայելէր։

Քիչ մըն ալ զբաղելու համար մեր «գրա-կան» կոչուած «հրապարակ»ովը, — զոր Քրի-զանթէմ՝ անողոք հեգնութեամբ մը՝ «անել փողոց»ի համեմատութիւններուն կ'իջեցնէր իր վերջին մէկ Բրոնիկովը, Մասիսի մէջ, միակ փոփոխութիւնը զոր կը գտնենք հոն, տարեգլխէն ի վեր, Լոյս չաքաթաթերթին կրօնաթերթի վերածուիլն է։ Պատրիարքա-րանի յատուկ եւ մեծ մասով Արմաշական-ներէ խմբագրուած կրօնական Հանդէս մը ունենալու գաղափարը, զոր քանիցս իրա-կանացնել փորձուեցաւ, այս անգամ վերջա-պէս կը գործադրուի յարատեւութեան վըս-տահութեամբ։ Եւ այս՝ երկու զօրաւոր պատ-ճառներով. նախ, որովհետեւ Օրմանեան Ս. Պատրիարքը ձեռք դրած է անոր վրայ, մասնաւոր գուրգուրանքով մը, — ինչ որ պիտի նշանակութիւն յունի։ Յետոյ, որով-

հետեւ գտնուեցաւ գրասէր—կրօնասէր վաճառական մը որ ինքնաբերաբար յանձն առած է թերթին հրատարակման բովանդակ ծախքը հոգալ երկու տարի, միեւնոյն ժամանակ ստանձնելով մատակարարութեան հսկողութիւնը։ Այնպէս որ, Լոյսին խմբագրութեան միակ հոգը պիտի ըլլայ... խմբագրութիւն, առանց բնաւ մտածելու բաժանորդներու թիւին, գանձումներուն, ծախքերուն վրայ,— մտահոգութիւններ որոնք անբաժան են մեր բոլոր թերթերէն և մանաւանդ պարբերականներէն։ Այս տեսակէտով, իտէալ թերթը կը դառնայ ուրեմն Լոյսը, իտէալ բառին նիւթական առումովը, այս նիւթանպաշտ գարուն մէջ։

Անցեալ տարի ալ գտնուեցաւ գրասէր—կրօնասէր վաճառական մը որ ինքնատիպ մտածողով մը 100 ոսկի տրամադրեց քարոզի մրցումի մը համար, ստանձնելով միանգամայն հրատարակելի քարոզներու հատորին տպագրական ծախքը։ Պէտք է հետեցնել այս երկու գեղեցիկ օրինակներէն,— վասն զի կարագետ է՛ք. խորասանձեանի և Յովհաննէս է՛ք. Թաւլանձեանի այս բարեյօժարութիւնները, որքան ալ կրօնային հրատարակութեանց սահմանին մէջ ամփոփուած, Մեկենասութենէ տարբեր բան մը չեն,— թէ կրօնային գրականութիւնը աւելի՛ քաջալերող կը գտնէ մեր ունեւոր դասակարգին մէջ՝ քան զուտ գրականութիւնը՝ իր բոլոր պէսպիսութիւններովը։ Ապասելով որ բաղդը այս վերջինին ալ մպտի մէկ օր, աշխարհիկ գրականութեան մշակները՝ մտածեն թերեւս մեղամաղձօրէն—«Երջանիկ կրօնականներ»։

Ամանորի գրական երեւոյթներուն անդրադառնալու առթիւ, որոնք մեծ շահեկանութիւն մը և ուշագրաւ նորութիւն մը չեն ընծայեր, կը բաւականանամ յիշատակել Յովհ. Գաղանձեանի տարեկան տեսութիւնը, — հրատարակուած՝ Կիսամասեայ Ծաղիկի նախորդ երկու թիւերուն մէջ,— որ ամփոփուած էր 1904 տարուան հրատարակչական արտագրութեանց, գիրք, լրագիր և հանդէս։ Գաւառացի ծանօթ բանասէրը, բանաստեղծութեանց վրայ ալ խօսելու առթիւ, չէր մոռ-

ցած յիշատակել յուսալից սկսնակ բանաստեղծները քաջալերելու համար Մասիսին բայցած «Նորերու Բաժինը» որու մասին կ'աւելցնէր թէ «մինչև վերջը չունեցաւ իր յաճախորդները»։ Յաճախորդ... Բառը տարօրինակ ու նորօրինակ կը գտնուէր երբ խնդիրը ոտանաւորի վրայ է, և մանաւանդ սկսնակներու, պատանիներու բանաստեղծութեանց վրայ, բոլորովին աննիւթական,— թէ և երբեմն ալ աննիւթ,— համակ զգացում և վերացում։ Կը հաւատամ թէ Գաղանձեան է՛ք. և քմահաճոյքը ունեցեր է անմեղ հեղինակին մը ուղղելու «Նորերու Բաժին»ին և զայն լեցնելու փութացող խանդավառ գրիչներուն, որոնք աւելի՛ անաբեկեցան անշուշտ «յաճախորդ» բառէն քան այդ Բաժինին ստեղծողը որ խանութ մը չի բանալու հաւատքը ունէր։ Բայց բառախաղին կատակը մէկ կողմ, տեղն է ըսելու թէ «յաճախորդներ»ը չէին որ պակսեցան, աւաղ, Նորերու Բաժինին համար ընդհակառակը, Մասիսի փոքրիկ մէկ անկիւնը գրաւող այդ բանաստեղծական էջը ողողելու, գրաւելու, տարիներով զայն շարունակելու ստորձան լրառատ հասան ոտանաւորներ ամէն կողմէ, Պոլսէն ու գաւառներէն։ Եթէ միայն դեռաբոյս պիտի երիտասարդներ ու դեռ կարճ շրջագրեալ հազնոյ աղջիկներ ըլլային այդ ճիւղին համար ոտանաւոր զրկողները,— որոնցմէ լաւագոյններն հրատարակուեցան ընտրանք,— թերեւս պատշաճ ըլլար դեռ ժամանակ մը բաց պահել այդ բաժինը։ Դժբաղդաբար, տարէցներ, իրենց ո՛չ մէկ տաղաչափութիւնը լոյս չի տեսած յուսահատներ ալ սկսան ափ առնել «Նորերու Բաժին»ին դուռը, զոր հարկադրուեցանք փակել՝ ո՛չ թէ «յաճախորդ» չի գտնուելուն, այլ պէտք եղածէն շատ աւելին գտնուելուն հետեւանքով։

S. Ա.

ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈՎ

Մեր գրասէր ընթերցողներուն հաճոյք մը պատճառելու վստահութեամբ, կը փութանք ծանուցանել թէ Մասիսի յաջորդ թիւով պիտի հրատարակենք, ի մէջ այլոց:

Բաճապետդուքիւն մը ԱԼՓԱՍԼԱՆԻ
Լ

Քրոնիկ մը ԲՐԻՋԱՆԹԵՄԷ

Այս վերջինը, թէև ներկայ թիւին համար գրուած, վերջին ժամուն ստանալնուս յետաձգելու հարկին մէջ գտնուեցանք:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐ

ԵՒ

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Այս երկուշաբթի օր, Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցիին մէջ հանդիսաւորապէս տեղի ունեցաւ Վահան էֆ. Գնածեանի պատկառութիւնը՝ Օր. Աննա Նուրեանի հետ, դուստր հանգուցեալ Նուրեան էֆ.ի: Արարողութեանց կը նախագահէր Տ. Հմայեակ եպիսկ. Դիմաքսեան, չրջապատուած բաղմաթիւ եկեղեցականներէ: Եկեղեցին լեցուած էր երկսեռ հրաւիրեալներու ընտրեալ բաղմութեամբ մը, որոնք յետոյ առաջնորդուեցան: Սրբանորոգի հիւրասրահը ուր չքաղանի մը շուրջ պատուասիրուեցան ներկաները և իրենց շնորհաւորութիւններն ուղղեցին նորապսակ ամուլին, ինչպէս նաև Նուրեան, Գնածեան և Սթամպուլեան Տիկնանց և Տեարց որոնք կը մեծարէին հիւրերը:

Հարսին ընծայուած ծանրագին նուէրներէ զատ, զրկուած էին նաև բաղմաթիւ խընդակցական հեռագիրներ ու ծաղկեփունջեր, հեռաքնակ աղբականներու և բարեկամներու կողմէ: Այս ամուսնութեան առթիւ դրամական նուիրատուութիւններ եղան Ազգ. Հիւանդանոցին որուն պատասպարեալներուն սեղան մը տրուեցաւ Վ. Գնածեան էֆ.ի ծախքով:

* * * Նախորդ շաբթուն, Գատըգիւղի Ս. Թադաւոր եկեղեցիին մէջ վայելուչ հանդի-

սաւորութեամբ կատարուեցաւ Աստուածատուր էֆ. Հարենցի (քեռորդի) Վսեմ. Արիկ էֆ. Ունճեանի) պատկառութիւնը Օր. Արուսեակ Էվրէնեանի հետ, նախագահութեամբ Տ. Դէորդ եպիսկ. Երէցեանի, և երկու կողմի ազգական ու բարեկամ ծանօթ ընտանիքներու ներկայութեամբ: Շնորհաւորութիւնք տեղի ունեցան փեսին բնակարանը:

Այս առթիւ ևս նուիրատուութիւններ եղան Ազգ. Հիւանդանոցին, և Սասգիւղի Գալֆաեան Որբանոցն ևս նպաստաւորուեցաւ որուն օմ. ոսկիի նուէր մը զրկած էր Նիւ-Եօրքէն՝ վաճառական Յովհ. էֆ. Թաւլանճեան, փոխան ծաղկեփունջի:

* * * Բարեկեցիկ ընտանիքներու միջև հաստատուած խնամութեանց ու կատարող հարսանեկան հանդէսներուն առթիւ Ս. Փրկչեան Հիւանդանոցին ու Գալֆաեան Որբանոցին եղած նուիրատուութիւնները ամէնէն յատկանշական պարագաներն են՝ բարեգործութեան տեսակէտով, և հաճելի է տեսնել որ այս ազնիւ սովորոյթը հետզհետէ կ'ընդհանրանայ մեր մէջ: Հիւանդանոցին պատասպարեալներուն ընծայուած սեղան մը, Որբանոցին սանուհիներուն եղած նուէր մը անհուն բերկրանքով կը լեցնեն այդ բաղդազուրկները որոնց գոհունակութեան արտայայտութիւնը իր հոգեկան աղբեցութիւնը կուենայ նորապսակներուն և նուիրատուներուն վրայ, աղօթքի մրմունջներու պէս սաւառնելով անոնց շուրջը:

ՄԱՍԻՍԻ գաւառային այն բաժանորդները որոնք նախորդ չրջանէն պակաս թերթ ստացած ըլլալով՝ իմացուցած են Սմբագրութեանս կամ իմացնեն այսուհետեւ, պիտի ստանան այդ թիւերը, կը բաւէ որ բաժանորդագիրնին վճարած ըլլան: Այս առթիւ կը խնդրենք գաւառային այն գործակալներէն որոնք 1904 տարեչրջանէն առկաին հաշիւ ունին, որ փութան զրկել իրեն գանձած բաժանորդագիրները:

Հիմնադիր—Կ. Ս. ԻԻԹԻԻՃՅԱՆ

Տէր եւ Տնօրէն—ՏՈՒՔ. ԵՂՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐՄԵՆԻԱ Օրագրի

PHOENIX ASSURANCE L Co

“ՖԻՆԻՔՍ”



ՀԻՄՆԵԱԼ Ի ԼՈՆԴՈՆ 1782 ԻՆ

ՊԸ ՊՈՐՏԻ Ի ՊՈԼԻՍ 1869ԷՆ Ի ՎԵՐ

ԱՆՊԼ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագլուխ եւ պահեստի դրամ

ԱճՈՎ. ոսկի 4,218,000

Ֆինիքս սոսկ հրդեհի դէմ Ապահովագրական Ընկերութիւն մըն է, ծանօթ իր պատշաւաբութեամբ եւ վստահաց մէջ իր անմիջական վճարումներով:

Ֆինիքս Կ'ապահովագրէ հրդեհի եւ կայծակի դէմ մէկն տեսակ տնչարժ եւ շարժուն ստացուածք, յոյժ նպաստաւոր պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՎՆԱՍՈՒՑ. Յորդ վճարած է տոսակ քան 27,000,000 անգլ. անգլ.:

Ընդհ. գործակալ Պուլսոյ եւ գաւառաց. Գ. ՎՍՐԴԱՆԵԱՆ

Վիքայիս խան, Պանք Օքսմանի փոխալարիս:

Փոխ գործակալք ի Պուլսոյ
ՌՈՒՐ. ԱՅԻԿԵԱՆ ԺԻՎԱՆ ԹԵՔԷԵԱՆ
Էմբն պէյ խան Զեզլեան խան

Զեհիլ իրագրու
1—10 Ա. ԷՆՔՍԷՐՃԵԱՆ

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբու եւ կնիստաբան (gynécologue), Տօքթօր Էմիրզէ օր 15 տարւան գործունէութեամբ մեծ համբաւ ստացած է, կը ծանուցանէ յարգալ յաճախողներուն թէ բնականորէ փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18, Բաց ի վերոյիշեալ իւր մասնագիտութենէ կը բաւժէ նաեւ նորագոյն մէթատերով ջղային եւ հոգեկան ու երեւակայական մէկն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս նէվրոսթէնի եւ tic անուանուած ուղիք երեսի եւ ուսերու ազեղ եւ ալամայ շարժումները եւ դաշտանի դաղորումէ յառաջ եկած ջղային խռովումները եւ երիտասարդական մայիքները, ինչպէս նաեւ գինեմայիքը, մօրիֆնամայիքը եւայլն: Կիրակիներէն զատ մէկն օր կէսօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կըն դունի, եւ ուրբաթ օրերը ձիւրբար կը դարձանէ վկայեալ աղքատները: 1—10

ԼԱ ՖՈՆՍԻԷՐ

LA FONCIÈRE

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հրդեհի, կեանքի եւ փոխադրութեանց

Դրամագլուխ 60,000,000 Էր.

Սոյն ապահովագրական հանրածանօթ ընկերութեան կեդրոնական Տնօրէնութիւնը կը գտնուի Բարիզ եւ Դրամատունն է Քրէտի Լիօնէն:

Թուրքիոյ ճիւղին համար Ընդհ. Տնօրէնն է Պ. ՍԻՎԼԷՆ ՄԻԼ եւ գրասենեակները կը գտնուին Ղալաթիա, Պէրէքէթ խան, Թ. 10—11.

ԼԱ ՖՈՆՍԻԷՐ ապահովագրական ընկերութիւնը՝ ինչպէս հրդեհի եւ առեւտրական փոխադրութեանց, նոյնպէս կեանքի ճիւղին համար յոյժ նպաստաւոր պայմաններ կը ներկայացնէ իր բաղմամբիւ յաճախողներուն զորս միշտ գոհ թողուցած է:

1—10

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐ ԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

ՀՐ ԴԵՀԻ ԶԻՒՂ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ փասք	274,000,000	Փր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

ԿԵՆՑ ԶԻՒՂ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ փասք	129,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնը	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստը	158,000,000	»
1902ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ՓՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈՒՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղչեալ զինքերով: Նպաստաւոր պայպաններ անհամեմատ կերպով աւելի գերադասեց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան մայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրութեան ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաղման (accumulation d'es b n fices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Քարքընք Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Լեւոյէթ Խան:—Գործակալութիւնը Թուրքիոյ գլխաւոր

քաղաքաց ԴԶ

1-10

ՓԵՆՏԻՔՍ ՕԹՐԻՇԻԵՆ

ԿԱՅՍ. ԹԱԴ. ԱՌԱՆԶՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԵՏՈՒԱԿԱՆ. ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ.

ԳՈՒԲՍ ԼՈՒԻ ՏԸ ՊԱՎԻԷՐ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդէմ հրդեհի եւ ծովային ահաւորութեան (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւն կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամաւան է Ի Կ. Պոլիս, Քուէքի Լիօնէ


Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Դրասնեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52-53-54-55-56

1-10

ԶԿԱՆ ԻԻՂԻ ՊԷՏԲ ՌԻՆԵՑՈՂՆԵՐՈՒՆ ԿՍՐԵԻՈՐ ԱԶԴ ՄԸ



ԴԵՂԱՐԱՆ

ԽԱՉԻԿ ՖԵՍՃԵԱՆ

Կ. Պօլիս, Մահմուտ փառա Պաշի, Ապուտ ԷՖ.ի խանին դէմ 261

Դեղարանն նկատելով որ՝ Պօլիս, կարեւոր եւ կեղբոն մէկ տեղը գտնուելուն առթիւ, Մօրինայի ձկան իւղի մասին եղած խնդրանքները հետզհետէ շատցած են, սոյն խնդրանքին եւ ի մասնաւորի Ազնիւ յաճախողաց տեսչութեամբ մը տալու եւ փոքր ինչ ծառայութիւն մը մատուցանելու համար, ուրիշ եւ այս ահագնաւ յատարարելու թէ՛ մասնաւոր լաւ ծառայութիւն մը համաձայն բերել, առաւել ըլլալով Բէթէր-ՄՕԼԼԵՐԻ Մօրինայի ձկան իւղին տալին տեսակը, ԱՌԱՆՑ ՀՈՏԻ, Կը ծախուի Դեղարանն՝ թէ մասնաւոր չիշերու մէջ եւ թէ քաջով, աւելեւ փափկակազմ առամաքտի համար իսկ խիստ ախոյժելի ըլլալով, թէ մեծերու եւ թէ՛ տղաքանցի պզտիկ ազգայնաց, Ուստի ամէն տնէն քանի մը փոփաքին խմել թէ աժան եւ թէ առանց հոսի գումար եւ անխաղախ ձկան իւղ, թող հաճին դիմել դեղարանն, գլխով մէկ անգամուան փորձով մը ստուգելու մեր խօսքերուն ճշտութիւնը։

Սոյն բաղամեայ դեղարանը, այս ահագնաւ նոր կազմակերպութիւնէ մը ետքը, Ուստի Զեմեմանի կողմէն, քիչ ատենուան մէջ պատիւը ունեցաւ դառնալով արդոյ հաստատկութիւն, որից քաջութեամբով պէտքը կը զգայ իրեն ուղղութիւնը եւ նպատակը ներկայացնել հաճութեան։

ՆՊԱՏԱԿ. — Դուք ձեզ իր յաճախողները միշտ՝ դեղերու թարմութեամբ, եւ արուեստին խղճամբ գործադրութեամբ։

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ. — Մաքրութիւն, ապանեխման դրութիւն եւ պարկեշտութիւն դեղաւորին սկզբունք եղած են։

Եւրոպական տան մը հետ բանակցած ըլլալով՝ ամէն շաբթու պատուաստի թարմ քիւսպեր (աւր գալիմի) կը հասնին բոստանով։

Ամէն օր, Դեղարանն յաճախող Հայ եւ օտարազգի բժիշկներէն յիշեց մասնաւորապէս հանրածանօթ Բժիշկ ԱԼԼԱՆՎԵՐՏԻ ԷՖ. որ ամէն Դ. Ե. Շբ. օրեր ժամը 8—11 իրեն դիմող հիւանդները կը դարմանէ իրեն ծանօթ փորձառութեամբ եւ մասնագիտութեամբ, դեղարանին մասնաւոր դարմանասրահը, Դեղարանը ունի հետեւ ԴԻՇԵՐԱՅԻՆ ՍՊԱՍ, 1—10

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հ Է Ր Ճ Ա Յ Ի

ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԵԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Գոհաբեղեցնելու, ամեն ճեպակ կամ կառարկաներու եւ ամենեւնեւ նորաձեւ հազուսններու, եւլն.



Պատիւ ունինք ծանուցանել պատուարժան հասարակութեան թէ՛ մեր վաճառատանց ապրանքներուն տեղակէիւրը աւելի ճօխապնդու ու մեր յարգելի յաճախորդաց աւելի գոհացում տալու նպատակաւ, ՈՍԿԵՐՉՈՒԹԵԱՆ վերաբերեալ ամէն տեսակ ապրանքներէ զտա. կրնորու եւ այրերու համար՝ եւ մեծ ու փոքր ամէն տարիքի յատուկ ԶԳԵՍՏԵՂԷՆ. ՆԵՐՈՒ. ճերմակեղէններու եւ (թօնֆիէ) ու միանգամայն ամէն տեսակ առջնակարգ ԿԱՐԱՍԻՆԵՐՈՒ (ձեղունի լամբաներ, փիտէներ եւ այլն.) ճօխ մթերանց մը հաստատած ենք. խիստ դիւրամատչելի գիներով, եւ կանխիկ ու ապագիկ պայմաններով:

- Այդ՝ կը հրաւիրենք մեր համակրելի յաճախորդները, որ հաճին դիմել վերապիշեալ վաճառատունները, ուրկէ անտարակրոյս անհուն գոհունակութեամբ պիտի մեկնին:
- ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
1. Ապագիկ գնողներու համար հարիւրին 20 կանխիկ եւ մնացեալ գումարին հարիւրին 5 շաբաթական վճարմամբ:
 2. Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ:
 3. Կանխիկ ծախում ապրանքներէն միմիայն ադամանդեալ, գոհարեղէններ երբ գործածուած քայք ալ չլսու մնացած ըլլան՝ հարիւրին 10 զեղչով եւ կռնուին: Իսկ ապագիկ ծախում եւ ալ չլսու մնացած միմիայն ադամանդեալ, գոհարեղէններն ալ հարիւրին 15 զեղչով եւ կռնուին:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Յ. Գ. Շարաճական վճարմանց համար հաւարիչներ ընդմիշտ պատրաստ են:

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՒՅ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 13 Կ. ՊՈԼԻՍ



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԻԵՀ. ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուքաղով արտօնուած

Կեդրոնաւոր ինքնապաշտպան, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԻԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ. ՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՂԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈՂԵՆԱՌՈՎ ՈՒՂԵՒՈ. ՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿԱՌԱՅԵԼՈՆ ԴԷՄ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած	10,666,667	Ֆրանք
Երաշխաւորութեան գումար աւելի քան	142,585,000	»

Ընկերութեան ապահովագրութիւններուն վճարուած դրամագլուխ եւ շնորհակալ հատուցում	314,768,000	»
1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագին եւ տոկոս	56,585,800	»

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոստ, Ղալաթիա,